




Ե Տ Տ Ր Ա Ր Ո

Գ Ի Տ Ս Ա Կ Ա  
Տ Շ Խ Ա Ր Կ Ա Կ Ա  
Գ Ր Ա Դ Ա Ր Ո

Ո. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

ԻՎԱՆ ՄԻԶՈՒՐԻՆ  
ՏԵՂ  
ՀՈՒԹԵՐ ԲԵՐԲԱՆԿ



№ 27—28

1935

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Վ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն  
— Յ Ե Ր Ե Վ Ա Հ —

579

Գ-13

12 MAR 2013  
04 MAR 2013

20 JUL 2010

№ 27/28 ՊԵՏՀՐՈՍԻ ԳԻՏԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 27/28

574  
գ-13 *dy*

Բ. ԳԱՐԻԲԵԼՅԱՆ

ԻՎԱՆ ՄԻԶՈՒՐԻՆ  
Հ Յ Ե Վ  
ԼՈՒԹԵՐ ԲԵՐԲԱՆԿ

Խմբագրությամբ Ն. ԽԱՆՉՅԱՆԻ

1010  
42371



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ - 1935

Պատասխանատու խմբագիր Ն. Խանջյան  
Աեղվական խմբագիր Հ. Պետրոսյան  
Տեխ. խմբագիր Հ. Տեր-Դավթյան  
Սըրապիչ Մ. Գևորգյան

Գլավալ 8713  
Հրատարակ. 3147  
Տիքա 3000

Մեր գարի հոչակավոր անձերից են յերկու անվանի, համաշխարհային համբավ ունեցող այգեգործ-պտղաբույծներ, վորոնց իրավամբ կարելի յէ անվանել զիտնական-բուսաբույծներ, նկատի առնելով այն խոշոր, արժեքավոր գործը, վոր կատարել են նրանք: Մեկը դրանցից—արդեն մի քանի տարի առաջ մահացած ամերիկացի—Լուրեր Բերբանիկն է, մյուսը—չնայած մեծ հասակին, այնուամենայնիվ յեռուն աշխատանքով տարված—ուստի պտղաբույծ Խվան Միջուրինը:

Յուրաքանչյուր գյուղատնտեսի, մանավանդ պտղաբույծի, անպայման ծանոթ պիտի լինեն այդ յերկու անունները: Նրանց կատարած բազմաթիվ նշանավոր փորձերը և այդ փորձերից ստացված դրական արդյունքները վոչ միայն զիտական արժեք ունեն, այլ ավելի մեծ չափով նաև խոշոր գործնական նշանակություն՝ մարդկային տնտեսության համար: Յերկուսի կատարած աշխատանքներն այնքան արժեքավոր են, վոր նրանցով պիտի հետաքրքրվի ամեն մի գյուղատնտեսայգեգործ, պտղաբույծ: Նրանց փորձերն այնքան պարզ և մատչելի յեն, վոր շատ շատերը, վորոնց աշխատանքը վորոշ չափով կապված է այդեղործության հետ, հեշտությամբ կարող են հետեւ նրանց որինակին և կիրառել իրենց պրակտիկ գործունեյության մեջ լավ ստուգված մեթոդները:

Մեր Միջության սոցիալիստական տնտեսության մեջ պտղաբուծական գծով կատարվելիք աշխատանքներում անպայման խոշոր տեղ պիտի բռնեն այդ նշանավոր պտղաբույծների մեթոդները, լայն չափերով պիտի կիրառվեն, ողտագործվեն նրանց արդյունավետ նվաճումները:

## ԻՎԱՆ ՄԻԶՈՒՐԻՆ

Այն, ինչ վոր կարողացավ անել Բերբանկը Կալիֆորնիայի մեղմ կլիմայում, վոչ պակաս հաջողությամբ իրագործեց աննպաստ կլիմայական պայմաններում մի համեստ ոռուս այգեգործ, վորի փորձերը մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը յերկար տարիներ անուշադրության եյն մատնված Ռուսաստանում սակայն այդ այգեգործի անունն ամերիկյան գիտական շրջաններում մեծ հարգանք եր վայելում, իսկ նրա փորձերն ել միծ հետաքրքրություն եյին առաջ բերել: Այդ ոռուս Բերբանկը — Խվան Վլադիմիրովիչ Միջուրինն է, վորը չնայած իր միծ հասակին մինչև 1935 թ. հունիսի 7 (յերե մահացավ) շարունակում եր իր համաշխարհային համբավ ունեցող աշխատանքները\*:

Միջուրինը ծնվել է 1855 թ. Ռյազանի նահանգում: 1870 թ. նա թողնում ե միջնակարգ կրթությունը և ընտանիքի անապահով նյութական կացության պատճառով, ծանր պայմանների թելագրանքով ստիպված ե լինում ծառայության մտնել յերկաթուղու վրա: Լինելով յերկաթուղային ծառայող՝ նա միաժամանակ սկսում ե մի գործ, վորով զբաղվել եյին Միջուրինի տոհմից շատ սերունդներ: Միջուրինը բնակություն է հաստատում Կազլով քաղաքում (այժմ՝ Միջուրինսկ) և այդտեղ փոքրիկ հողամասում զբաղվում ե իր սիրած գործով — այգեգործությամբ, պտղաբուծությամբ: Ինչպես ասացինք, այգեգործության մեջ Միջուրինյան տոհմն արդեն հայտնի յեր, և Միջուրինի պապի անունը հավերժացել եր այն բանով, վոր նրա այգում ստացված և հիմա յել տարածված տանձի վորոշ գոփոխակներ մինչև որս ել «միջուրինյան տանձ» են կոչվում:

Իր գործունեյության սկզբնական շրջաններում Միջուրինը մեծ դժվարություններ եր քաշում: Դալով Կազլով՝ նա 12 տարի աշխատում եր գորպես յերկաթուղային զրասենյակի ծառայող, կամ վորպես կայարանի պետ: Սուղ նյութական միջոցները նրան ստիպեցին բացի հիմնա-

\* 1934 թ. սեպտեմբերին Խորհրդային իշխանությունը բարձր գնահատելով Խվան Միջուրինի աշխատանքները, տոնեց նրա գործունեյության 60-ամյակը,



կան աշխատանքից լրացուցիչ գործով ել զբաղվել. հանձն առավ նաև յերկաթուղային ժամացույցներն ստուգողի պաշտոնը: Միջուրինի կյանքի սկզբնական շարքաշ շրջանը մի քիչ հեշտում է Բերբանկի կյանքը: Միջուրինն ել սիրում եր յերեմն զբաղվել տեխնիկայով. նրան հետաքրքրում եյին եկեղակարամիքենաները, եկեղակարամարքավորումը. նա նույնիսկ պատրաստեց մի դիմումներենա:

Մի կերպ Միջուրինին հաջողվում ե մի քիչ միջոցներ հավաքել, ապա վորոշում ե իր հիմնական աշխատանքը դարձնել պտղաբուծությունը: Վարոնեթ զետի ձախ ափին, քաղաքից դուրս գնում ե մի փոքրիկ հողամաս. այդ հողամասը նրա պտղաբուծական լուրջ և հետաքրքրական աշխատանքների վայըն ե դառնում: Այստեղ նա շարունակում ե իր սկսած փորձերը: Քաղաքի բնակարանից այստեղ ե տեղափոխում ծաղկամաններում, արկդներում աճեցրած բույսերը — պտղատուծուերը, տունիերը: Բույսերից մի քանիսը նա աճեցրել եր անմիջապես կորիզից:

Նոր հողամասում աշխատանք ու յեռանդ չխնայելով, Միջուրինն այնպես ե ծավալում իր հետաքրքրական փորձերը, վորք քիչ թե շատ կարողանում ե իր նյութականն ապահովել, ապա բոլորովին հրաժարվում ե ծառայությունից, թողնում յերկաթուղին և մնում սոսկ վորպես այգեգործ: Յերկաթուղային ծանր աշխատանքը թողնելով, նա իր ամբողջ ժամանակը նվիրում ե իր կարևոր աշխատանքին — պտղաբուծության: Յեկ պիտի շեշտել, վոր Միջուրինի կատարած աշխատանքները պտղաբուծության բնագավառում լայն մասսաների ուշազրությունը զբաղեցին: Մի շատ կարեոր և լուրջ հարց եր առաջադրել Միջուրինը, վորի իրագործումը պետք ե զարկ տար յերկրի պտղաբուծությանը և այն վայըրելում, ուր աննպաստ հողային և կլիմայական պայմանների պատճառով չեր կարելի պտղատու բույսեր աճեցնել: Միջուրինը մտածեց հաղթահարել բնական աննպաստ պայմանները և ընդարձակել պտղաբուծության սահմանները, նոր սայուններում պտղաբուծությունը զարգացնել: 1900 թ. Միջուրինը վորոշում ե իր բույսերին սովորեցնել — կենսունակ մնալ լավ աճել և սովորական բերքը տալ նաև աննպաստ կլիմայական պայմաններում: Իր սկզբնական հողամասը — Մուրմասովի ավանի մոտ — հարմար չեր նոր ծրագրի իրագործման համար, այդտեղի հողը լավը եր, սեանոգային եր, Միջուրինը նոր հողամաս ե գնում կազմվ քաղաքի ծայրամասում, Դոնսկայա ավանում, Վարոնիժ-լիսնոյ զետի ափին: Այստեղ ե տեղափոխում իր բուրք բույսերը, և այս վերջին հողամասը մինչև որս ել մնում ե վորպես Միջուրինի արժեքավոր և բաղմատեսակ աշխատանքների հիմնական վայըը:

Միջուրինի կատարած գործը շատ մեծ ե: Մեր յերկրի տնտեսության մեջ պտղաբուծությունը, արդյունաբերական պտղաբուծությունը

խոշոր տեղ ունի: Ճիշտ ե, այդ բնագավառում դեռ տեխնիկան այնքան ուժեղ զարգացած չե, բայց թե ինչքան մեծ արդյունք ե տալիս այն, յերեսում ե հենց բանից, վոր նա իր այժմյան դեռ տեխնիկապես վոչ այնքան բարձր ետապում յուրաքանչյուր տարի միջնական ուղղությունը արտադրանքը ե տալիս: Միջուրինի կատարած աշխատանքի արդյունքուն անշուշտ մեծ նշանակություն ունեցան մեր յերկրի պտղաբուծությունը զարգացնելու, նրա տեսպես արագացնելու համար: Իր փոքրիկ կալվածքում սիրող այգեգործ Միջուրինն այնպիսի խնդիրներ եր մշակում և լուծում, այնպիսի նոր մեթոդներ եր կիրառում, վոր պիտի բարձրացնելին պտղաբուծության արժեքը, նպաստելին պտղաբուծության ծավալման և տարածման գործին. նոր հյուսիսային ռայոններ պիտի ներգրավելին հարավային մի շարք պտղատու բույսեր աճեցնելու գործի մեջ:

Միջուրինը բերել եր տալիս նուսաստանի զանազան վայըրերից, արտասահմանյան տարբեր յերկրներից պտղատու բույսերի արժեքավոր տեսակներ և աշխատում եր ընտելացնել հարմարեցնել նուսաստանի միջին, վորոշ գեպքերում նաև հյուսիսային ռայոններին:

Բայց պտղաբուծների սովորական մեթոդներն անհաջողություններ ելին առաջ ըերում: Յերել աված բույսերից քչերն ելին զիմանում նոր պայմաններին: Հյուսիսի կլիմայական ծանր պայմաններին հարավի ջերմասեր բույսերը չելին զիմանում, կամ քչերն ելին զիմանում, բայց այս զեպքում կորցնում ելին իրենց վորակը, իջեցնում բերքատվությունը:

Միջուրինը մտահոգված եր հիմնական մի խնդրով — վորոնել և գտնել նուսաստանում արժեքավոր պտղատու բույսերի այնպիսի փոփոխակներ, վորոնք զիմանային նոր կլիմայական պայմաններին, սերմեր տային, ապա ուրիշ փոփոխակների հետ խաչաձևելով նյութ ծառայելին տեղական լավ փոփոխակներ առաջ բերելու համար: Այդ նպատակով Միջուրինն իր հանապարհուղությունների ընթացքում ծանոթացավ պլատատու բույսերի բազմատեսակ փոփոխակներին, ուսումնասիրեց պտղաբուծության զրությունը տարբեր ռայոններում:

Միջուրինի իր բազմաթիվ զիմանություններից, փորձերից յեկավ այն վճռական յեղակացության, վոր պտղաբուծության զարգացման և բարձրացման գործին մեծ չափով կարող ե նպաստել տեղական փոփոխակներ, ինարկե լավորակ փոփոխակներ, առաջ բերելը: Յեկ այդ հնարավոր ե. ան հրաժեշտ ե միայն ունեցած փոփոխակներն աղնվացներ, խառնելով, խաչաձևելով ուրիշ տեղերի լավ փոփոխակների հետ: Տեղական փատորակ ձևերն ունելին մի կարեռ հատկություն — զիմանություն ելին կլիմայական պայմաններին, ուրեմն ուրիշ վայըրերի լավորակ փոփոխակների հետ խաչաձևելը հնարավորությունն եր տալիս զիմանության ավելացներու նաև

ուրիշ արժեքավոր և կարևոր հատկություններ, ինչպես՝ ավելի փորակյալ պտուղ, բերքառատություն և այլն։ Միջուրինն իրար հետ խաչաձեռում եր տարբեր տեսակի բույսեր, առաջ եր բերում, ինչպես ասում են, հիբրիդներ (խառնածիններ), ապա կիրառելով նաև պատվաստման յեղանակը, առաջ եր բերում այնպիսի փոփոխակներ, փորոնք աչքի եյին ընկառում իրանց կենսունակությամբ, դիմացկունությամբ։

Միջուրինն իր փորձերը գաղտնիք չեր դարձնում, իր աշխատանքի սկզբնական հետաքրքրական փորձերի, նրանց հաջող արդյունքների մասին Միջուրինը դրում եր մասնագիտական դյուլատնտեսական մամուլում։ Այդեզրծներն արգեն գիտեյին Միջուրինին, շատերը հետևում եյին նրա մեթոդներին։ Ընդունակ և գյուղարար միաք ունեցող Միջուրինի համբավը հասել եր նույնիսկ արտասահման, վորտեղի մասնագիտական մամուլն ուշադրությամբ հետևում եր ոռուսական Բերրանկի ամեն մի նոր փորձին, հաջողության։ Ամենից շատ նրա գործով հետաքրքրվել եյին ամերիկացի այգեգործները — գիտնականները, պրակտիկները։ Հասկանալի յե, թե ինչու Ամերիկան այդպիսի առանձնահատուկ հետաքրքրությամբ եր հետևում Միջուրինի աշխատանքներին։ Ամերիկան գիտեր այգեգործության հնարավորությունները Բերրանկի աշխատանքներից։ նա հասկացավ նաև, թե վորքան մեծ հեռանկարներ են բացվում այգեգործության առաջ Միջուրինի կատարած գործով։ Առանձնապես հետաքրքրվում եյին Միջուրինով մանավանդ կանագայի (Հյուսիսային Ամերիկա) այգեգործները։ Կանագայի կլիմայական պայմանները համապատասխանում եյին Միջուրինի առաջ բերած պաղատուբույսերի սորտերի աճեցման համար պահանջվող կլիմայական պայմաններին։

Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ եր, յերբ քիչ մնաց մեր յերկիրը զրկվեր Միջուրինից։ Միջուրինի աշխատանքներով Ռուսաստանում այնքան ել տարված չեյին, այդ աշխատանքները թերագնահատում եյին, նրանց արդյունքները լայն կիրառում չեյին գտնում այգեգործների զրջանում։ լայն հասարակայնության ուշադրությունը գրավված չեր Միջուրինի հանրոգուա գործով։ Զափազանց անտարբեր եր ցարական կառավարությունը չեյին խրախուսում, պաշտպանում Միջուրինին նաև գիտական շրջանները։ Յեզ 18 տարվա ընթացքում համարյա յուրաքանչյուր տարի Միջուրինի կալվածքն այցելում եյին ամերիկյան պաղաբույժ - մասնագետները, ամերիկյան պրոֆեսորները վաշինգտոնի գիտա - հետազոտական ինստիտուտի դիրեկտոր՝ բուսաբան Մայերի գլխավորությամբ, լավ ուսումնասիրում եյին Միջուրինի նվազումները։ Միջուրինյան պտղատու բույսերի փոփոխակներն Ամերիկայում ավելի մեծ ժողովրդականություն և կիրառում ունեյին, քան ցարական Ռուսաստանում։

Աննախանձելի, դժվարին պայմաններում եր աշխատում չվճարովող Միջուրինը, յերբ մի որ հրավեր ստացավ տեղափոխվելու Ամերիկայի Միջուրյալ Նահանգները։ Նրան խոստացան ապահել թե նյութապես, թե անհրաժեշտ հողամասով և բոլոր տեխնիկական հարմարություններով, անհրաժեշտ քանակի աշխատակիցներով, նույնիսկ պատրաստ էյին մի նավ տրամադրելու նրան — իր ընտանիքը, տան կահույքը և այդու բոլոր հազվագյուտ և իր աշխատանքի համար անհրաժեշտ բույշերը տեղափոխվելու համար։

Միջուրինը մերժեց առաջարկը, նա գերադասեց մնալ իր վատթար պայմաններում և ջանք ու տոկունություն շխնայել զարդացնելու պտղաբուծության գործը Ռուսաստանում։ Միջուրինն ամենսին չվճարվեց։ Ամերիկա, ի, արտասահմանյան զիտնականների ցուցարերած հետաքրքրությունը նրան քաջալերում եր, նա տեսնում եր, վոր իր կատարածը հանրոգուա և կարեոր աշխատանք ե, ուստի անհրաժեշտ եր գտնում շաբունակել այդ գործն այն յերկրում, վորն ավելի մեծ կարիք ուներ։ Ցարական կառավարությունն իհարկե իմացավ այն մասին, վոր ամերիկացիք ամեն կերպ աշխատում եյին Միջուրինին գրավել իրենց յերկիրը։ ամերիկացիների առաջարկն սթափեցրեց պաշտոնական գյուղատեսական շրջանները, նոր հիշեցին Միջուրինին և սկսեցին մտածել նրա մասին.. մտածել վոչ թե նրան գգալի և անհրաժեշտ աշակցություն ցույց տալու համար, այլ բոլոր արգելակող միջոցների գիմեցին, վոր չլինի թե Միջուրինը համաձայնի ամերիկացիների առաջարկին։ Միջուրինի մոտ գալիս ե ինչ վոր բարձր աստիճանավոր և հասկացնել ե տալիս նրան, վոր նա «հայրենասիրական զգացմունքներից զրդված չպետք և համաձայնի Ամերիկա գնալ», և խոստացավ կառավարության կողմից վորոշ աշակցություն, բայց այդ ոժանդակություն արտահայտվեց այն բանով, վոր Միջուրինին առաջարկեցին ինչ վոր զրասենյակային պաշտոն հողագործության գեպարտամենտում։

Սակայն առանց կառավարական խոչընդուների յել Միջուրինն ամենսին մտադրություն չուներ Ռուսաստանից հեռանալու, չնայած վոր ցարական կառավարությունն ամերիկացիների առաջարկից հետո յել վոչ մի նյութական ոժանդակություն ցույց չտվեց նրան, այլ բավականացավ միայն այն բանով, վոր պարզեատրեց Միջուրինին յերկու շքանշանով։

Իր հիշողություններում խոսելով այդ ժամանակաշրջանի իր ծանրվիճակի մասին, Միջուրինը պատկերացնում ե այն ծանր աստիճանի զժվար պայմանները, վորոնք կաշկանդել եյին նրան, քայլայում եյին նրա բազմամյա աշխատանքների արդյունքները։ Փոքրիկ հողամասը հնարավորություն չեր տալիս նրան իր աշխատանքը ծավալելու, մենակ եր նա, սուզ միջոցներով և ողնականներից զուրկ։ Այդպիսի պայմաննե-

բում առաջ բերած ազնվացրած փոփոխակների մեծ մասը փչանում եր, վորոշ մասն ընկում մասնավոր այգեգործների ձեռքը կամ արտասահման տարվում: Այնուամենայնիվ Միջուրինը չեր թողնում իր գործը, շարունակում եր պտուղների ազնվացման փորձերը, ելի առաջ եր բերում նոր և այսպիսի լավորակ փոփոխակներ, զոր այգեգործները, զյուղացիները գերադասում եյին իրենց այգիների համար անհրաժեշտ սերմացու, պատվաստի տունկեր, տնկիներ ձեռք բերել Միջուրինի տնտեսությունից: Միջուրինյան պտուղները գնորդներ միշտ ունենում եյին, և այս հանգամանքը փրկում եր Միջուրինին, տալիս եր նրան այն անհրաժեշտ մինիմալ գումարը, զորով նաև մի կերպ կարողանում եր պահպանել իր տնտեսությունը քայլայումից:

Իմպերիալիստական պատերազմի որերին քիչ եր մնում Միջուրինյան հողամասը գրավելին և վերածելին սովորական բանջարանոցի, բայց Միջուրինը կարողացավ դրա առաջն առնել: Քաղաքացիական կովի ժամանակ ել նրա կալվածքը սպիտակները ցանկացան մարտկոցի գիրքերից մեկը դարձնել, բայց այս անգամ ել Միջուրինը, ինքնառպանության սպառնալիքով, մի կերպ փրկեց իր հողամասը:

Միայն խորհրդային իշխանության որով Միջուրինին հաջողվեց դուրս բերել իր հանրոգութագործ ծանր կացությունից և նոր թափով շարունակել կարեւը աշխատանքը:

1923 թվականին Մուկվայում կազմակերպված զյուղատնտեսական ցուցահանդեսում բոլորի ուշադրությունը դրավեց այն բաժինը, ուր ցուցադրված եր միջուրինյան պտղաբուծական տնտեսության արտադրանքը: Խորհրդային իշխանությունն անմիջապես իր հովանավորության տակ վերցրեց Միջուրինի տնտեսությունը, փորին ոժանդակելու կարեփությունը, վորի զարգացման, ծավալման անհրաժեշտությունը ձևակերպեց իր հետևյալ վորոշման մեջ: «Խոշոր գործնական նշանակություն տալով Միջուրինի աշխատանքներին պտղաբուծության, այգեգործության, բանջարաբուծության բնագավառում և անհրաժեշտ գըտնելով՝ գործնական որեն ոգտագործել նրա նվաճած արդյունքները, ՌՍՖՀ ժողկոմի սովորել վորոշեց ճանաչել նրա փորձնական բուժարանը վարպես պետական նշանակություն ունեցող հիմնարկ, անվանել նրան՝ Շ. Վ. Միջուրինի անվան փորձնական բուժարան»: Բացի այդ, հանձնարարել Հողժողկոմատիկ բուժարանին կից կազմակերպել լաբորատորիա, կահավորել սարածներով (գործիք, պարագա), տրամադրել գիտական աշխատակիցներ, ապա շտապ կարգով հրատարակել նրա կարեւը աշխատությունները:

Այս նշանավոր վարոշումը նոր եջ բաց արեց Միջուրինի և նրա բուժարանի կամքում: Միջուրինը, չսայած իր յերկար տարիների դժվարին պայմաններին, չեր վհատվել իսկ հիշյալ հոգատար վերաբերմունքը

խորհրդային իշխանության կողմից — նրան վոգերություն, նոր ուժ ներշնչեց, և նա կրկնակի յեռանդով կպավ իր սիրած գործին: Նրա աշխատանքներն իրենց արժանի գնահատականն ստացան. նա արդեն համոզվեց, վոր յերկիրը ճանաչեց նրա կատարած աշխատանքների անհրաժեշտությունը, ոգտակարությունը:

Ինչպես ասացինք, ցարական կառավարությունը զսպել, կաշկանդել եր Միջուրինի կենդանի գործը. միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Միջուրինի գործը դրվեց հաստատուն գիտական հիմքերի վրա, լրիվ ապահովվեց նյութական տեսակետից՝ լրացուցիչ ընդարձակ հողամասով. վանքերից մեկի հողամասը հատկացվեց Միջուրինի պտղաբուծական գիտական կայանին: Ամերիկացիք վաղուց հետաքրքրվել եյին Միջուրինի գործով, միջուրինյան պտղուների սորտերը լայն ժողովրականություն ունեցած աշխատանքը Մայերը մասին: Մայերը շատ մոտ եր ծանօթ Միջուրինի աշխատանքներին: Ռուս մասնագետ կաշկարովի հետ ունեցած զրույցում Մայերը համեմատության մեջ զնելով Միջուրինին հերբանկի հետ, նշեց Միջուրինի վորոշ առավելությունները: Բերբանկի առաջ բերած պտղուների սորտերի ծագումը գաղտնիք եր շատերի համար, մինչդեռ բոլորովին հակառակն և նա տեսնում Միջուրինի մոտ, վորի մեթոդները, կիրառած տեխնիկան պարզ ու հասկանալի յեն և պտղաբույժներին մատչելի: Մայերի ասելով, յեթե Միջուրինը գնար Ամերիկա, նրան կը ջապատեյին չափազանց մեծ հոգատարությամբ, ամեն տեսակետից կապահովելի յին նրա կյանքը և աշխատանքը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը գնահատեց ժրաշան այգեգործին և ամերիկացիներից վոչ պակաս, դեռ ավելի մեծ ոգնության արժանացավ Միջուրինը պրոլետարական հայրենիքում. վոչ միայն հնարավորություններ ստեղծվեցին Միջուրինի աշխատանքների համար, այլ և հիմք դրվեց նրա զեկավարության տակ գործող գիտահետազոտական պտղաբուծական այնպիսի ինստիտուտի, վորը նորանոր, ավելի համարձակ հարցեր պիտի լուծի և վոր զլաւալորն և — յերիտասարդ միջուրինյան կազմեր պիտի տա յերկրին:

1931 թ. Խ. Միության ԿԳԿ բարձր դաշտակելով Միջուրինի նշանակությունը պտղաբուծական նոր կուլտուրաների, փոփոխակների զարգացման բնագավառում, պարզեատրեց նրան Լենինի շքանշանով:

## ԷՌԵ ԱՐԵՑ ՄԻԶՈՒՐԻՆԸ

Միջուրինը ապացուցեց, վոր պտղաբուծությունը կարող և մեծ տեղ գրավել մեր տնտեսության մեջ: Նա պտղատու բույսերի, բանջարեղենի, գեկորատիվ բույսերի բազմատեսակ նոր փոփոխակներ առաջ բերեց:

Միջուրինը մեծ ջանքեր եր թափում պտուղների նոր, այնպիսի փոփոխակ-  
ներ առաջ բերելու, վոր լավորակ ու դիմաց կուն լինելին և մասսայական  
աճեցման համար մատչելի: Միջուրինը մտահոգված եր մանավանդ այն  
բանով, թե այս կամ այն փոփոխակի պտուղը, կամ վորևե պտղատու  
բույսն առաջին անգամ ինչպես պետք ե աճեցնել այն տեղերում, ուր  
սովորական անհրաժեշտ պայմանները չկան: Հարավում կան բազմատե-  
սակ պտղատու բույսեր, վոր ցանկալի յե աճեցնել նաև Ռուսաստանի  
միջին և հյուսիսային ուայոններում: Հարկավոր եր պաղաբուծության  
համար նոր ուայոններ ներքրավել, այս կամ այն վայրում յեղած  
փոփոխակներն ազնվացել և հնարավորություններ ստեղծել նորերը  
մտցնելու համար: Պետք եր ունենալ մեծ հնարագիտություն, փորձա-  
ռություն և համբերություն՝ վորևե բույս բորբովին նոր տեղին հար  
մարեցնելու համար:

Միջուրինը տարբեր մեթոդներ եր կիրառում: Հին տեղական փո-  
փոխակները պետք եր ազնվացնել. այդ արվում եր յերբեմն խաչաձեւ-  
ման միջոցով, այսինքն՝ այս փոփոխակը միացնում եյին ավելի լավ  
փոփոխակի հետ: Կիրառում եր նաև պատվաստման յեղանակը. հարա-  
վային պաղատու փոփոխակների ճյուղերը պատվաստում եր տեղական  
ձևերին, վորոնք վորոշ փոփոխությունների եյին յենթարկվում: Առանց  
պատվաստի, առանց խաչաձևման՝ տվյալ տեղում, որինակ՝ Ռուսաստանի  
միջին կամ հյուսիսային ուայոններում, աճեցնել վորևե հարավային  
ողագութեալու — հնարավոր ե, բայց վոչ միշտ նրանք լավ են աճում.  
համախմբի քանի տարի անց սկսում են նոր տեղում կորցնել իրանց  
արժանիքը, ավելի հեշտությամբ յենթարկվել հիվանդությունների,  
ուրեմն և շուտով քայլացվել և առնասարակ անարժեք դառնալ:

Միջուրինն առանձնակի ուշադրություն դարձեց նոր բույսերն  
ընտելացնելու վրա՝ նրանց սերմերի միջոցով: Նա ոգտագործում եր  
արտասահմանյան լավագույն փոփոխակների սերմերը, վորոնք առաջ  
եյին յեկել տվյալ բույսի հայրենիքում: Այսպես եր մտածում նա-  
սերմը բույսի սաղմային վիճակն ե, մի գուցե նոր միջավայրում ծլող  
սերմն ավելի ազգվի նոր պլայմաններից, և այնպիսի փոփոխություններ  
առաջ գան նրա մեջ, վոր նրանից աճած բույսն արդեն ունենա նոր  
միջավայրին համապատասխանող մի շարք հարմարումներ: Սակայն այս  
մեթոդն ել լավ արդյունքներ չեր տալիս, ծլած բույսերը ձմռան ցրտերին  
չեյին դիմանում, հագարից հազիվ մեկն եր դիմանում: Դրական արդյունք  
ստանալու նպատակով Միջուրինն արդեն սկսում ե ցանել հարավի այն  
բույսերի սերմերը, վորոնք արդեն աճել ու հասունացել են նոր միջա-  
վայրում, և. Միջուրին միջին ուայոններում: ուրեմն այս դեպում  
բույսը քիչ թե շատ ազդված կլիներ միջավայրից: Հենց նույն այդ  
նոր միջավայրում տեղի յեր ունեցել այդ բույսերի ծաղիկների փոշո-

առումն ու բեղմնավորումը: Ուրեմն բույսի սաղմային մասը (սերմի մեջ)  
ձևակերպվել եր նոր միջավայրում: Փոշուման համար ագրակից ծաղիկ-  
ներ եյին սղտագործվում: ալյալ բույսի փոշուման համար ծաղկեփոշին  
վերցնում են ուրիշ փոփոխակից, նույնիսկ ուրիշ տեսակից, բայց դար-  
ձյալ հարավային ձևի բույսից վորը սակայն ընտելացած եր հյուսիսա-  
յին միջավայրի պայմաններին: Հեռավոր փոփոխակների, կամ տեսակ-  
ների խաչաձևման հետևանքով առաջ բերած սերմնարույսերից ավելի  
զրական արդյունքներ եյին ստացվում:

Բույսերն ընտրելիս Միջուրինը մեծ ուշագրություն եր դարձնում,  
թե վորտեղից եյին նրանք, ինչ յերկներում եյին աճում. խաչաձևման  
ժամանակ նկատի յեր առնում, թե բույսերն ինչ չափով եյին իրար  
ազգակից, նկատի յեր առնում արտադրողների անհպատական ուժը,  
հաշվի յեր առնում վոչ միայն ընդհանրապես բույսի դրական հատկու-  
թյունները, այլ հատկապես և նրա պտղագում:

Փորձերը հաստատեցին, վոր ավելի լավ արդյունքներ ստանալու  
համար գերադասելի յե խաչաձևել լատ ազգակցության հեռավոր ձևերը,  
տարբեր տեղերի, իրարից հեռու ընկած վայրերից բերած բույսեր:  
Հենց այդ հանգամանքից յելնելով՝ Միջուրինին հաջողվում եր յերեմն  
նույնիսկ տարբեր հայրենիքից բերած տարբեր ցեղեր խաչաձևեր Պետք  
ե հիշել, վոր բույսերի գասակարգման, կարգավորման մեջ փոփոխակները  
ասելով համականում են բուսական ամենամոտ ազգակիցներ. տեսակները  
քիչ հեռու յեն իրարից. մի տեսակը կարող ե բազմաթիվ փոփոխակ-  
ներից բավկացած լինել: Ավելի հեռու յեն իրարից ցեղերը. ամեն մի  
ցեղն ու իր հերթին տարբեր տեսակներից ե համախմբված: Ինչպես  
ասացինք, Միջուրինն իր փորձերի ժամանակ կարողանում եր լավ  
արդյունք ստանալ նույնիսկ տարբեր ցեղեր խաչաձևելով: Այսպիսի  
գեպքում, ինչպես յերկում եր պրակտիկայից, հնարավոր եր բույսն  
ավելի հեշտ հասցնել այնպիսի զրության, յերբ նա ավելի շուտ եր  
հարմարվում նոր պայմաններին. ըստ յերկութիւն բույսն իր կառուց-  
վածքով այնպիսի փոփոխությունների յեր յենթարկվում, վոր նոր  
միջավայրին հարմարվելն ավելի լավ եր կատարվում:

Միջուրինը յեկավ այն յեզրակացության, վոր ստար բույսերն ան-  
միջավես, առանց նրանց կազմվածքի մեջ վորոշ փոփոխություն առաջ  
բերելու, չի կարելի սովորեցնել վոր նոր պլայմաններում այնպիսի  
արդյունքներ տան, ինչպիսին տալիս յեին իրենց հայրենիքում: Շատ  
անգամ բույսն ամենեին չեր ել դիմանում անսովոր միջավայրին: Խել  
քանի վոր ցանկալի յեր այս կամ այն բույսն ընտելացնել նոր սայոնին,  
անհրաժեշտ եր հարցն այլ կերպ լուծել, անհրաժեշտ եր յուրաքանչյուր  
սայոնի համար իր սեփական փոփոխակն առաջ բերել: Հարավային  
գորեե լավ պտղատու բույս, կամ արտասահմանյան շատ ոգտակար և


դուրեկան պտուղ տվող մի ծառ անմիջապես բուծվելով նոր տեղում, ասենք՝ ավելի ցուրտ կլիմայական պայմաններում, չի դիմանում. մինչդեռ յերբ այդ բույսերը խաչաձեռմ են տվյալ միջավայրին զիմացող (բայց ոտար բույսից վորակով շատ ցածր) ազգակից բույսի հետ—դրական արդյունքներ են ստացվում: Տեղական և ոտար բույսերի խաչաձեռմից առաջ բերած հիբրիդի սերմերն ավելի հեշտ կանոն նոր պայմաններում, քան յեթե ուրիշ տեղերի աղնվացեղ բույսերն անմիջապես աճեցնես նոր միջավայրում:

Այսպիսի մեթոդով Միջուրինը բազմաթիվ հարավային բույսեր, միշտ շարք ոտարերկրյա բույսեր ընտելացրեց ԽՍՀՄ միջին ուայրներին, իսկ վորոշ ձևեր ել հյուսիսային շրջաններին, Յեկաման անգամ ել նա աշխատում եր տեղական նոր փոփոխակներ առաջ բերել. սրանք ունենալով տեղական հողային և կլիմայական պայմաններին համապատասխան հատկանիշներ, միաժամանակ ստանում ելին և ոտարերկրյա, հարավային — մոտ կամ հեռավոր ազգակցի լավ հատկությունները, որինակ՝ լավորակ պտուղներ, ընդհանրապես բերքառատություն կամ ուրիշ այնպիսի գծեր, վորոնց շնորհիվ հենց բերվել ելին նոր տեղերում բուծվելու և տարածվելու համար:

Անշուշտ թեթև աշխատանք չե տեղական նոր փոփոխակներ առաջ բերելը. դրա համար պահանջվում են բազմաթիվ և լավ կատարված փորձեր: Ինչ վերաբերում ե Միջուրինին, նա այդ անելու բոլոր ընդունակություններն ուներ: Միջուրինի համբերության և եներգիային պիտի վերագրել այն, վոր նա համառությամբ, հարյուր հազարավոր բույսերի հետ գործ ունենալով, կարողացավ նույնիսկ այնպիսի նոր տեղական փոփոխակներ առաջ բերել վորոնց արտադրանքը, տեղական հին փոփոխակների համեմատությամբ, տասից ավելի անգամ բարձրացել եր:

Իր փորձերի ժամանակ Միջուրինը շատ հանգամանքների վրա պիտի ուշադրություն դարձներ: Լուրջ աշխատանք եր պահանջում խաչաձեռման յենթակա ծաղիկների ընտրությունը: Հիմնական խնդիր եր — տեղական պայմաններին հարմարվելու ընդունակ լավ նոր փոփոխակ առաջ բերել: Այսպես կոչված մաքուր տեսակները չունեն այդ հատկությունը, և վոչ ել մոտ ազգակցի ձևերից առաջ բերած խառը ձևերը, բայց փորձից յերեաց, վոր լավ ելին այդ տեսակետից այն հիբրիդները, վորոնք առաջ ելին բերվում հեռավոր հայրենիք ունեցող բույսերից, իսկ յեթե միենույն վայրից են — տարբեր տեսակներից առաջ բերած հիբրիդները:


Միջուրինն իր փորձերով նկատել եր, վոր այս կամ այն անհատապես ձեռք բերած հատկանիշները ժառանգաբար անցնում են սերնդին, սերունդն ազդվում ե, յերբեմն վատ կամ լավ հատկանիշը ժառանգում



Միջուրինյան խաղող՝ հյուսիսային սպիտակը:

ծնողներից, այս դեպքում խոշոր նշանակություն ունի խաչաձևման յենթակա բույսերի ընտրությունը, նկատի յե առնվում բույսի բնույթը, ուժը, հասակը: Հիբրիդների ընտրության մեջ ել պահանջվում ե մեծ փորձառություն, այդ կողմից Միջուրինն այնքան վարժված եր, վոր մոտավորապես պատկերացնում եր, թե իր ընտրած բույսն ինչ վորակի կլինի, ինչպիսի պտուղներ պիտի ստացվեն:

Տարբեր գրական հատկություններ ունեցող բույսերի սերունդն ստանում եր յերկու ծնողների հատկություններն ել որինակ, նա առաջ բերեց այսպիսի հիբրիդ — «Հյուսիսային սպիտակ» խաղող: Այդ հիբրիդն ստանալու համար նա խաչաձևեց յերկու ձեեր, որինակ, այսպիսի



Միջուրինյան խաղող՝ «Հյուսիսային սպիտակ»:

վայրերից մեկը՝ կանադյան (ամերիկյան) «Բլանդա» փոփոխակը, մյուսն ել՝ Ռւսուրիսկան ԽՍՀՄ Հեռավոր Արևելքից: Յերկուսն ել իրարից չափազանց հեռու ընկած տեղերից են, ամեն մեկն ուներ վորոշ գրական հատկություններ — ուսուրիսկանը՝ Միջության միջին ռայոնի կլիմայական պայմաններին դիմանալու ընդունակություն, իսկ ամերիկյանն ել՝ համի բարձր գորակ: Ստացված հիբրիդն ուներ արգեն այդ յերկու արժեքավոր հատկությունն եր:

Մի ուրիշ կարեոր հանգամանք ևս նկատի առաջ Միջուրինը: Հատկանիշների ժառանգական փոխանցման՝ պրոցեսում Միջուրինի կարծիքով նշանակություն ունի նաև արմատների աշխատանքը, այսինքն նրանց մատակարարած սննդարար նյութերը: Այդ դիտողությունից յեներով նա արտադրող բույսը պահում ե իր արմատների վրա, այս գեղքում չի վերացվում արմատի մասնակցությունը բույսի սերմի ձեակերպման, զարգացման պրոցեսում:


Միջուրինի համար տարբեր բույսեր միացնելու գործում խոչընդուաներ չկային. նա իր հնարագիտությամբ միացնում եր իրար հետ և այն-

պիսի բույսեր, վորոնցից սեռական ձեռվ հիբրիդներ առաջ բերելու անհնարին են. սրա պատճառը լինում եր այն, որ խաչաձևման յենթակա բույսերի ծաղիկների կառուցվածքն այնպես եր, վոր հնարագիր չեր փոշոտումն առաջ բերել: Այս դեպքերում Միջուրինը կիրառում եր այսպես կոչված «վեգետատիվ մերձեցման» մեթոդը: Նախքան ձաղիկները խաչաձևման յենթակա բույսերից մեկը պատվաստվում ե մյուսի վրա. պատվաստվող բույսը պիտի լինի մատղաշ հասակում և խառնածին, տարբեր փոփոխակ երից առաջ բերած ձե: այսպիսի ձեը հեշտ ե պատվաստվում յենթապատվաստի վրա և հեշտ ել յենթարկվում ե վերջնիս աղդեցությանը: Պատվաստ ընդունող բույսը գույկ չափակ լինի տերենիրից, վորոնց սննդագործական աշխատանքն իր վագեցությունը կունենա պատվաստաճյուղի վրա: Այս դեպքերում, ինչպես նկատել ե Միջուրինը, պատվաստված բույսերի ծաղիկներն այնպիսի փոփոխություններ եյին կրում, վորոնք այլևս չեյին արգելում նրանց փոշոտումն ու բեղմնավորությունը: Ուրեմն պատվաստաճյուղը գեռ մատղաշ լինելով, լով չնեակերպված լինելով նոր տեղում, նոր միջավայրում յենթարկվում ե վորոշ փոփոխության, վոր մասամբ, անդրադառնում ե և ծաղիկների վրա: Այդ ձեռվ Միջուրինը պատվաստեց, որինակ, վարունդի վրա դդում (մատղու հասակի, տարբեր փոփոխակների սերունդ): Նույն վարունդի վրա պատվաստեց և սեխու Դրանից հետո պատվաստված բույսերի ծաղիկներն ըստ յերեսութիւնը որոշ փոփոխությունների յենթարկվեցին, վորովհետև փոշուման արգելքը վերացավ և այլևս դժվար չեր սեխու ծաղիկներով փոշուել գդումի ծաղիկը, — առաջ ե բերվում սեխու գդումի խառնածին: Այն, ինչ վոր հնարա վոր չեր սովորական, սկզբնական պայմաններում, իրագործելի գարձավ «վեգետատիվ մերձեցման» մեթոդով: Վոր իսկապես այս դեպքերում ծաղիկները վորոշ փոփոխություններ են կրում — այդ բանում Միջուրինը համոզվեց մի շարք ուրիշ բույսեր ստուգի լով: Ուրիշակ, տանձի վրա աճող խնձորենու ծաղկեփշին տարբերվում եր նույն, բայց ինքնուրույն աճող խնձորե ու ծաղկեփշուց: Բույսերին սեռականուածես իրար միացնել հաջողվեց միայն «վեգետատիվ» մեջեցման միջոցով Բացի սեխու և դդումի հիբրիդից, Միջուրինը առաջ բերեց խնձորե և տանձի, տանձի և սննդենու, սերկենիլի և տանձի հիբրիդներ:

Միջուրինը գժվարությունների առաջ կանգ չի առնամ, պատահում եր, վոր սեռական մերձեցում առաջ բերելու համար Միջուրինը վիճում եր արհեստական միջացների, բեղմնավորության յենթակա վարսանդի վրա տեղափոխում եր փոշուող ծաղիկի սպու (վարսանդի վերին ծայրամասը) մի մասը, փոխադրում եր փոշուողի սպու վրայի հեղուկը բեր մնավորվող ծաղիկի զարսանդի սպու վրա, այս այս նշանակությունն ունի, վոր տվյալ ծաղիկի վրա ուսումնական կուկու ծեր իրեն պատկից

հեղուկի մեջ. բավական և վոր ծլեց, այնունետև հեշտանում և նրա ծրւմը և բեղմավորվողի վարսանդի վրա:

Միչուրինը լավ ուսումնասիրել եր հիբրիդներ առաջ բերելու բոլոր բացասական և գրական պայմանները: Պատվաստվող բույսերն իրար վրա կարող են ազդել: Միչուրինի մոտ, որինակ, 600 գրամանոց անտոնովյան խնձորը, պատվաստվելով սիրիական խնձորենուն, վորոշ փոփոխությունն եր կրում — փոխվում եր պտղի ձեր, վորակը, նաև բույսի տերմները: Վեգետատիվ մերձեցման ժամանակ, որինակ՝ տանձենու վրա կիտրոն պատվաստեցին, տանձենու տերեները փոփոխվեցին, տացան կիտրոնի տերեների փայլը: Կիտրոնի տերեներն իրանց պատրաստած նյութերով ոժանդակեցին տանձենու արմատների աշխատանքին, իսկ արմատների կատարած գործն ել անդրադարձավ տանձենու վրա:



Վեգետատիվ մերձացման մեթոդը յիրկու ցեղերի՝ դուռմի և սեխի սեռական մեացման համար. ա) յենթապատվաստ վարունք. բ) պատվաստ սեխ. ց) յենթապատվաստ—դուռմ, դ) դուռմի պտուղ, վորը ստացված և սեխի փոշու միջոց՝ բեղմավորելուց հետո, է) սեխի պտուղը, վորն ստացվել և դուռմի փոշու միջոցով բեղմավորելուց հետո:

Այս կամ այն ազգեցությունը վերացնելու նպատակով Միչուրինը հետեւյան եր անում. պատվաստելուց առաջ պատվաստվող բույսի գարպացումը յերկարաձգում եր մինչեւ պտղաբերությունը. այդ առաջին պտուղը տալու որից ել մի քանի տարի անց միայն կատարում եր պատվաստումը: Այսպիսով նա աշխատում եր պատվաստ ընդունող բույսի բացասական ազգեցությունը վերացնել:

Միչուրինը հառուկ ուշազրություն եր դարձնում սերմերի վորակի վրա: Հիբրիդի սերմերը շատ չպիտի չօրացվեն, այդ բացասարար և ազդում բույսի լավ հատկությունների վրա: Հողի նկատմամբ ել պիտի աշխատել այն ուղղությամբ, վոր նրա մեջ չափազանց առատ անունդ:

Հլինի, այդ հանգամանքը մատղաշ սերմնարույսերի արագ աճում և առաջ բերում, վորը կարող ե բացասական կիրպով ազդել բույսի վրա: Ինարկե պիտի գործադրություն նաև մի շաբթ ուրիշ անհրաժեշտ միջոցներ, որինակ՝ տեղափոխությունը կատարել ժամանակին, կտրել այն ձյուղերը, վորոնք հիշեցնում են տվյալ բույսի վայրի ձևերի ձյուղերը և այլն:

Միչուրինը, ինչպես տեսանք, բազմատեսակ մեթոդներ եր կիրառում. բացի այդ, նա այնքան մանրազնին եր ուսումնասիրել բազմատեսակ պտուղների «կյանքը», վոր արդեն վորոշ նշանների հիման վրա գիտեր, թե իր ցանկացած փոփոխությունն առաջ բերելու համար վոր բույսը պետք ե ընտրել հիբրիդի վրա նա արգեն նախորոք տեսնում եր իր վորոնած հատկություններն առաջ բերելու հնարավորությունը, մինչդեռ սովորական այգեգործը կարող եր այդ չնկատել: Բույսերի լավ հատկությունները Միչուրինը չեր վորոնում 1—2 տարեկան բույսի վրա: Փորձից համոզվեց, վոր այդպիսի հատկություններ յերեան են գալիս ավելի ուշ հասակում: Քեզ չեր պատահում, վոր սերմը ցանում եր և առաջին տարում արդյունքները բացասական եյին լինում, պտուղները վատորակ: Միչուրինը վաղաժամ յեզրակացություններ անելու որվոր չեր, սպասում եր, և իսկապես, մի քանի տարի անց պտուղները լավանում եյին:

Միչուրինի մեթոդները և գործադրած տեխնիկան շատ բազմազան են. նրանք պիտի հետաքրքրեն անշուշտ ամեն մի այգեգործի, վորի համար Միչուրինի նվաճումները չափազանց ուսանելի յեն:

Ի՞նչ արժանիքներ ունի Միչուրինը, ի՞նչո՞ւ այնքան մեծ ժողովրդականություն և վայելում նրա անունը վոչ միայն Միության մեջ, այլև մեր յերկրի սահմաններից ել գուրս. այնտեղ ել հայտնի յեն պտուղների «միջուրինյան փոփոխակները»:

Միչուրինը գիտական հիմքերի վրա դրեց Միության պտղարուծությունը: Ի արգմատեսակ հարավային պտուղներ, բույսեր առաջ քաշեց գեղի հյուսիս, ընտելացրեց նոր, վոչ այնքան մեղմ, վորոշ տեղերում և ծանր կլիմայական պայմաններին: Նա այդ արեց հարավային փոփոխակների ոժանդակությամբ, առաջ բերելով տեղական փոփոխակներ Միության միջին և հյուսիսային ուայունների համար. նույն տեղերում մացրեց պտղասու բույսերի կուլտուրաներ, վորոնք Միչուրինից առաջ անմատչելի եյին փորձի համար, կամ աճեցնելու գեղաքում անպտղաբեր եյին, չեյին զարգանում, չղիմանալով հողային, կլիմայական անապատ պայմաններին:

Տեղական տեսակներ առաջ բերելու, տեղական ձևերն ազնվացնելու համար նա բերել եր տալիս նույնիսկ արտասահմանից համապատասխան բույսերի լավորակ փոփոխակներ. այսպես, որինակ, նրա մոտ կան բուսական ձևեր չնդիպատանից, Չինաստանից, Կորեայից, Ճապոնիայից, Տիբետից, Թուրքեստանից, Հիմալայան շրջաններից, իսկ ամերիկյան

փոփոխակներ տալիս եր Կանադան, յեվրոպական փոփոխակներ — Ֆրանսիան, Անգլիան, Բալկանյան յերկրները և այլն:

Միջուրինը մնձ կապեր ուներ յերկրագնդի ամենատարրեր վայրերում. Նա ոգուազուծում եր ամեն մի ճանապարհորդի, ամեն մի ճռապոր եքապեղիա դիպի արտասահման՝ բուսական ձեւեր ստանալու համար: Փոխանակման կարգով ստանում եր սերմեր, պատվաստացուղեր: Ստացվածը մեծ հոգատարությամբ, խնամքով ցանվում եր, ուսումնասիրվում ոգտագործում տեղական ձեւերի ազնվացման, փոփոխման համար: Իսկ մեր յերկրի համար բոլորովին նոր պտղատու բույսերն ել հարմարեցվում ելին մեր պայմաններումն ևս մասսայականացվելու տարածվելու համար:

Յուրաքանչյուր ստացված բույսի բազմակողմանի ուսումնասիրությունը, նրա կենսազրության ծանոթությունն անհրաժեշտ նախապայմանն ելին բոլոր ձեռնարկած փորձերի համար:

Ուրիշ տեղերի բույսերը տեղական ձեւերի հետ խաչաձեւելու ժամանակ Միջուրինը միշտ նկատի յեր առնում, թե բույսն ինչ ծագում ունի, ինչպես ելին նրա հայրենիքի կլիմայական և հողային պայմանները, ինչպիսի կառուցվածքային առանձնահատկություններ ունի, ինչ բուսական համակեցություններում եր պատահում, բույսն ինչ բնույթուններ և վերջապես հիմնական և ամենակարենոր հարցը նրա համար այն եր, թե ովյալ բույսը տնտեսապես մարդկային տնտեսության կարիքները բավարարելու տեսակետից վորպիսի արժանիքներ, առավելություններ ունի: Այս վերջին հանգամանքը Միջուրինի աշխատանքներում մեծ տեղ եր բանում: Եվերջո Միջուրինն իր աշխատանքների հիմնական նպատակը տեսնում եր այն բանում, թե ինչպես զարգացնի մեր յերկրի պտղարտծությունը, վերջինս տարածի և այնպիսի վայրերում, վորտեղ, թվում եր, թե անկարելի յեր պտղաբուծությամբ բարպել կամ փորոշ տեսակի պտուղներ, բանջարեղեն բուծել: Միջուրինի նպատակն եր — առաջ բերել բարձրորակ, դիմացկուն, առատ բերք տվող, տնտեսապես արդյունավետ և ոգտակար տեսակներ և այդ տեսակներն առաջ բերելու մեթոդները, տեսնիկան ամեննեին գաղտնիք չգարձնելով լայն չափերով մասսայականացնել վոր մատչելի լի և շատ տեղերի համար, նույնիսկ այն ուայսների համար, վորոնք բոլորովին չգիտեյին այս կամ այն պտղատու բույսի, բանջարեղենի բուծումը, տեղական հողային և կլիմայական աննպաստ պայմանների պատճառով:

## ՄԻՉՈՒՐԻՆԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Բերենք այժմ Միջուրինի նվաճումներից մի քանի որինակներ: Նա առաջ բերեց բալի մի շարք այնպիսի բերքառատ տեսակներ (պրունուս տոմենտոզ, սլրունուս յաղոնիկա և այլն), վորոնք ար-

ժեքավոր են թե վորակի տեսակետից և թե իրանց անտեսական արժեքի կողմից: Կարճահասակ զամանացին այդ ձևերը հարմար երին նախամելու տեսակետից, հեշտ եր նրանց վրայից վոչչացնել մնասատուներին, մյուս կողմից ել հեշտանում եր նրանց վրայից պտուղները հավաքելու գործը:


Միջուրինը Միջության՝ միջին՝ ուսուններում մտցրեց կեռասը. այժմ կան դիմացկուն փոփոխակներ շատ համեղ պտուղներով: Դեղնան ել ընտելացրեց և հարմարեցրեց այդ ուսուններին, բայց սրա համար նա դիմեց այսպես կոչված միջնորդ բույսերի ոգնության: Ահա թե ինչպես: Ամենից առաջ խաչաձեւեց մ.նողլական նշենին (ամիգդալուս մոնղոլիկա) Դավթյան նշենու հետ (ամիգդալուս Դավթյանա): Ստացված հիբրիդը գուրայի ցրտադիմացկուն, գոնե նրա պտղաբողոջները դիմանում ելին մինչև 38° ցրտի: Զեր ազգում նրա ծաղիկների վրա նաև վաղ գարնանային ցուրտ ողը (80°C): Ապա այս դիմացկուն նշենու հետ նա խաչաձեւում և Ղրիմի յերկաթյա կանցլեր» գեղձի փոփոխակը: Ռերեմն նշենու միջոցով հաջողվեց հարավային մի բույս — զեղձը — ընտելացնել հյուսիսային միջավայրին: Յեղ այդ հիբրիդ գեղձն արգեն մի քանի տարիների ընթացքում լավ աճում և պտուղներ և տալիս:

Միջուրինի ջանքերին պիտի վերապրել այն, վոր նա կազմովի ցուրտ կլիմայական պայմաններին (բավական յերկարատե ցուրտ ձմեռով) կարողացավ ընտելացնել և այնտեղ աճեցնել հարավի համար բնորոշ մի բույս, ինչպես խաղողն եւ: Նա առաջ բերեց քսանից ավելի նոր փոփոխակներ, վարոնցից մի քանիսն արդեն լավ դիմանում են ձմեռվացրերին և ամեն տարի լավ բերք են տալիս: Հետաքրքրական եւ մի գեպք. 1929 թվականին զաղովի ուսունումն ել սաստիկ սառնամանիքներ յեղան, ցրտերը հասան մինչև — 40° R. մի շարք միջուրինյան պտղատու ծառեր չգիմացան, ցրտահար յեղան, մինչդեռ վերոհիշյալ խաղողը վոչ միայն բաց ողում դիմացավ սառնամանիքն, այլ և 1929 թ. ամռան իւ սովորական հարուստ բերքը տվեց:

Միջուրինն աշխատառ տարրեր վայրերի պայմաններին համապատասխան հատուկ փոփոխակներ առաջ բերել. այդպիս արեց նա միջին և ստորին վոլգայի շրջանների, ի, Մոսկվայի մարզի նկատմամբ (խաղողի փոփոխակներ — «հյուսիսային սպիտակ մատ», «հյուսիսային սպիտակ լոռողը», «արկադիկ», «բույսուր» և այլն):

Վաչ միայն մեր յերկրում յեղած բույսերը փոփոխել և ազնվացներ այլ և նոր պտուղներ մացնել մեր յերկիրը, — ահա Միջուրինի նախակներից մեկն ևս Յեղ նա կարողացավ մի մանջուրական ծառանման փաթաթվող բույս հարմարեցնել մեր պայմաններին և այնպիս փոփոխել և ազնվացնել, վոր նրա վերին աստիճանի համեղ, գուրալի պտուղները խաղողի մրցակիցը գարձան: Այդ բույսը ակտինիդիան է: Ակտինիդիայի

Հայրենիքը Հեռավոր Արևելքում արևելյան Մանջուրիայի անտառներն են, մասսամբ և Հիմալայի շրջանները. ուրիշ վոչ մի տեղ նա չի պատահում: Ահա այս վայրի բույսից ընտրությամբ առաջ բերեց ազնվացրած չորս փոփոխակներ: Ակտինիդիայի հատապտուղները թեև հատ-հատ են նստած յերկար կոթունների վրա, բայց հավաքված են խումբ-խումբ, այնպես վեր վորոշ չափով այդ խմբերը հիշեցնում են խաղողի փողկույզները: Փաթաթվող բազմամյա բույս ե, քաղցր, անառասի (արքայախնձոր) համի, կանաչ, յերկարավուն գլանաձև հատապտուղներով: Ակտինիդիայի տեսակներից (18 տեսակ) Միջուրինն առաջ բերեց ամենազիմացկուն մի տեսակ — «Ակտինիդիա Կոլոմիկտա»: Այդ ձեզ խաչաձևելով «Ակտինիդիա Արդուտաճ-ի հետ՝ ստացավ յերկու փոփոխակներ, վորոնք թեև նույնպես դիմացկուն ձևեր գուրս յեկան, բայց այնպիսի նուրբ ու փափուկ հատապտուղներ ունեցին, վոր անհնար եր նրանց թարմ-թարմ ուղարկել մի վորեե տեղ: Համենայն դեպք փորձերն ակտինիդիայի վրա շարունակվում են:




Ակտինիդիա

Աչքի յե ընկնում միջուրինյան մորենին. հատապտղի լայնությունն ե 23 մմ, յերկարությունը — 39 մմ, քաշը — 9,55, Այդ հսկայական միջուրինյան մորենին չափազանց բերքատու յե, յերբեմն մի թփից ստացվում ե մինչև 7200 կգ բերք: Այդ շատ դիմացկուն-փոփոխակը բազմացվում է պատվաստանյուղերով անկած ճյուղերով:

Բառասուն տարի համառ կերպով աշխատանք թափելով Միջուրինը կարողացավ ստանալ (1932 թ.) ծորենու (բարբարիսի) խոշոր պտուղներ, բայց առանց կորիզի: Առվորական ծորենու պտուղները խոշոր կորիզներով են, մինչդեռ միջուրինյան անկորիզ ծորենին շատ համեղ ե, հոտավետ և խոշոր:

Բազմազան են Միջուրինի առաջ բերած պտուղների, հատապտուղների, բանջարեղենի փոփոխակները. նրանք աչքի յեն ընկնում իրենց



«Հյուսիսային ծիլան», վորչ առաջ ե բերվել Միջին Ռուսաստանի բայց նողում աճեցնելու համար:

Խոշորությամբ, համի բարձր վորակով, դիմացկունությամբ՝ Միության միջին շրջանների պայմանների նկատմամբ. վորոշ փոփոխակներն ել անցել են նույնիսկ գեղի հյուսիսային ռայոնները:

Միչուրինի հիմնական նպատակներից են նաև վերացնել վորոշ պատուղների տարածման սահմանները, մուծել այդ պատուղներին այնպիսի տեղեր, ուր բռնուվին նրանք չկային, կամ յիթե կային, չափազանց աննշան եր նրանց նշանակությունը վատորակ լինելու պատ-




«Միջնորդ» նուշը՝ Միջին Ռուսաստանում աճեցնելու հասար դիմացկուն փոփոխակնիւրին»

ճառով։ Պտուղների հարմարեցումը կլիմայական և հողային տարրեր պայմաններին, տեղական փոփոխակներ առաջ բերելով, ունեցավ այն նշանակությունը, վոր մի շարք ռայոններ, վորտեղ այս կամ այն պտղատու բույսերն անհնարին եր աճեցնել, մատշելի եյին զառնում նույն բույսերի միջուրինյան փոփոխակների համար։

Միջուրինի աշխատանքները չսահմանափակվեցին պտղատու ծառերով, տունկերով. նա հատուկ ուշադրություն դարձրեց նաև բանջարանոցային բույսերն ազնվացնելու, աճեցնելու, նոր ռայոններ մուժելու

և տարածելու, տարբեր պայմաններին հարմարեցնելու աշխատանքների վրա։ Այդ ուղղությամբ նա գգալի նվաճումներ ունեցավ։

Միության միջին ռայոններում չեր կարելի աճեցնել ձմերուկ, սիր. հողը և կլիմայական պայմաններն անհամապատասխան եյին նրանց համար։ Յեկ յեթե հաջողվում եր ձմերուկների և սեխերի միքանի փոփոխակներ աճեցնել հիշալ վայրերում, այդ լինում եր միայն նոր հողերում և այն գեպքում, յեթե 90—105 տաք որեր եյին լինում։ Այդքան տեսական տաք որերով տարիներ հազվագեղ են։ Այդ ուղղությամբ փորձեր յեղել են. բայց վաղ գարնանային ցանքսերը շատ



Միջուրինյան պտղներ։

հաճախ ուշ վրա հասնող գարնանային ցրտերից եյին վասավում, իսկ ավելի ուշ կատարած ցանքսերն ել տուժում եյին վաղ աշնանային սառնամանիքներից. մի խոսքով՝ բացովթյա աճեցումն անարդյունավետ եր։ Միջուրինը մտածեց լուծել այդ խնդիրը, և այդ նրան հաջողվեց։ Նա գիտեր սիբիրական սեխի մի փոփոխակ, վոր յերկար տարիներ կենտրոնական Սիբիրում բուժվում եր մի սիրող՝ այգեգործի կողմից։ Այդ սեխի սերմերից Միջուրինն առաջ բերեց սիբիրական փոփոխակը, ապա այն խաչաձևեց ֆրանսիական առաջնակարգ անանասի փոփոխակի հետ։ Մի քանի տարվա ընթացքում ընտրություն կատարելով՝ վերջապես ստացավ մի փոփոխակ, վորի լրիվ աճման համար բավական եր 60 որ։ Միջուրինյան «կոմունարկա» փոփոխակը՝ հունիսի սկզբներին ցանքած,

նորութունի կեսին արդեն հասունանում եր: Վաղահաս միջուրինյան փուփոխակը թեև այնքան մեծ չէր (800 գ քաշով), բայց հյութալի յեր, քաղցր և գուրեկան համով: «Կոմունարկա» փոփոխակը լավ աճում է կենտրոնական սևահողային մարզում, Մոսկվայի մարզի հյուսիսային մասերում, Գորկու շրջանում, նաև Միջին Վոլգայում և Ուրալում:


Միջուրինյան պտուղների տեսակներն այնքան շատ երազմազան են, վոր հատորներ են հարկավոր յուրաքանչյուրի նկարագիրը և արժեքները մեկ-մեկ տալու համար:

Միջուրինը չբավականացավ Միջությունում յեղած պտուղներով. նա սախագծել եր և արդեն իրագործում եր ուրիշ և հեռավոր յերկրների պտուղների բուծումը, հարմարեցումը մեր պայմաններին: Միջուրինի անվան գիտա-հետազոտական տնտեսությունում կարելի յե տեսնել բազմաթիվ ոտար բույսեր, վորոնք հողային, կլիմայական նոր պայման-ներում լավ աճում են և պտուղներ տալիս: Փորձնական շրջանն անց-նելուց հետո այդ պտուղների լավագույն, դիմացկուն փոփոխակները պիտի տարածվեն և բուծվեն մեր կոլտնտեսություններում, խորհում տես-սություններում: Ճապոնիայից՝ բերված ե սերկելը, Պամիրի լեռներից՝ գաճաճային տանձը, ոշինդրի տերևներով, ահա չափազանց հազվագյուտ (նախասացագաշտային շրջանի) մի բույս, — փշավոր տունկ, այսպես կոչված՝ պրունու պլազիտապերմում, գեղձի նախատիպը. այս բույսը բերվել ե Մանջուրիայից:

Արժե միքանի խոսք ել ասել Միջուրինյան ծխախոտի մասին: Թեև պտղաբուծական նվաճումներից չե այդ, բայց միջուրինյան գեղին գլանակային ծխախոտի կուլտուրան այնքան մեծ նշանակություն ունեցավ, վոր Միջուրինի մասին խոսելիս չի կարելի կանոք չառնել և այդ կուլտուրայի վրա: Միջին Ռուսաստանում ծխախոտի փոփոխակ-ներից հնարավոր եր աճեցնել այսպես կոչված «մախորկան»: Մախորկան նիկոտին (ծխախոտի թունավոր նյութը) շատ ե պարունակում, հետեւա-բար նա վատ ե անդրադառնում ծխողի վրա: Յերկար տարիների աշխա-տանքների արդյունքն յեղավ այն, վոր Միջուրինին հաջողվեց առաջ բերել վաղ հասունացող, քիչ նիկոտին պարունակող և մախորկայից ավելի լավորակ ծխախոտ: Դրա համար նա ոգտագործեց մի շարք ոտարերկրյա ծխախոտներ: որինակ՝ նա խաչաձեւեց բուլղարական դեղին վաղահաս ծխախոտը սումատրի մանրատերեւ ծխախոտի հետ: Միջ-խոտի նոր փոփոխակը խստապահանջ չե դեպի հողը, որինակ՝ շատ լավ աճում ե ավազու հողերում. կլիմայական պայմանները նպաստավոր են, և այդ փոփոխակը կարողանում է լրիվ հասունանալ: Հին մախոր-կային հատուկ վասակար բուսական խառնուրդներից նոր փոփոխակն ազատ ե, հետեւաբար ծխողի վրա վատ չի ազդում:

Նոր փոփոխակի ծխախոտը տալիս ե առաջին բերքը (ներքե-տերեւները, հոտավիտ թույլ ծխախոտ տվող): տաս որ անց հասունա-նում են միջին տերեւները. տաս որ ես հարկավոր ե, վոր վերեկ տերեւները հավաքվեն: Ծխախոտի վորակը (թնդությունը) աստիճանա-բար փոխվում ե. ամենաթունդ ծխախոտը ստացվում է վերեկ տերեւնե-րից:

Միջուրինյան փոփոխակի ծխախոտը տասն անգամ ավելի ոգուտ և տալիս քան մախորկան:



Դւանակային հերթիղային «Միջուրին» գեղին ծխախոտի պլանտացիան

Միջուրինին հաջողվեց նաև առաջ բերել յուղատու վարդի նոր փոփոխակ: Զափազանց թանգ գնահատավող և անհրաժեշտ բան ե վարդա-յուղը, հազվագեց միայն այս կամ այն տեղում հաջողվում ե բուծել վարդի այնպիսի տեսակներ, վորոնք արդյունաբերական տեսակետից անհրաժեշտ չափով կարողանային վարդայուղ տալ: Հայտնի յե այդ կողմից «Կազանլիկի» (Բուլղարիայի Կազանլիկի հովատից) յուղատու վարդը», բայց սրա բուծումը դժվար ե ընթանում մեր կլիմայական պայմաններում, նույնիսկ Ղրիմում: Յեկ յեթե մի շարք պաշտպանողական միջցներ կիրառելով յերբեմն հնարավոր ե գառնում նրա բուծումը, այդ գեպքում սակայն ծախսերն ավելի շատ են լինում տփած արդյունքից, այնպես վոր ավելի եժան ե դրսից բերել տալ այդ վարդը: Մեր գեղին վարդերի տված եթերային յուղերի տոկոսն աննշան ե: Միջուրինն ելի մտածեց տեղական փոփոխակներ առաջ բերել հարկավոր եր հիմք ընդունել տեղական զիմացկուն յուղատու վարդը (թերկուց աննշան տոկոսով յուղ ունեցող) և այն խաչաձեւ կազանլիկի վարդի հետ: Միջուրինն այնպես ել արեց. նախ կազանլիկի վարդը խաչաձեւ տեղական զեղին (պարսկական կոչված) վարդի հետ, ապա կատարեց կրկնակի խաչաձեւում հնդկական «Մուկիթիլերա» վարդի հետ:

Միջուրինը ստացավ մի նոր գիմացկուն փոփոխակը վորի վարդայուղի քանակը հասցրել եր մինչև 0,004 %, ավելի շատ, քան նույնիսկ կազմակերի յուղատու վարդինը, վորը տալիս ե ամենաշատը 0,003 %:

Միջուրինի աշխատանքը գնահատվեց խորհրդային կառավարության կողմից: Միջուրինի սկզբնական փոքրիկ կարգածքը վերածվել է համաշխարհային անուն և նշանակություն ունեցող գիտա-հետազոտական կայանի, ուր վոչ միայն բազմաթիվ գործնական փորձեր են տեղի ունենում, այլ և նրա գիտա-հետազոտական ինստիտուտում հատուկ գիտական ուժեր հետախուզական աշխատանք են կատարում, իսկ այդ կայանի պտղաբուծական տեխնիկումը, բանֆակը և բարձրագույն ինստիտուտը բանվորական և գյուղացիական մասսաներից գիտական հատուկ կադրեր են պատրաստում մեր յերկրի պտղաբուծությունը, այդեզրծությունն ավելի բարձրացնելու, ավելի զարգացնելու: Համար: Հետաքրքրական և, վոր այնտեղ, ուր մի ժամանակ մտքի նեխման, վերեզմանային շունչն եր տիրում, ուր վաճառքի զանգերի դողանջն եր լսում և աշխատավոր մասսայի ուղեղն եր թմրեցվում, — ահա այդտեղ, այդ նախկին վաճական հոգածասում գլուխության միտքն և ծավալվել հանրոգուտ աշխատանք և կատարվում, մի աշխատանք, վորի արդյունքները գալիս են ծառայելու ԽՍՀ Միության սոցիալիստական շինարարության:

Խոշոր, չափազանց խոշոր տարբերություն կայամերիկյան Բերբանկի մասնավոր պտղաբուծական կարգածքի և Միության Միջուրինի անվան պտղաբուծական գիտա-հետազոտական կայանի մեջ:

Միջուրինը, չնայած իր պատկառելի հասակին, իր ուժերը, իր վաթսուն տարվա փորձառությունը ամբողջովին տրամադրել եր կենդանի և անհրաժեշտ գործին և տեսական գիտական ուժերի հետ միասին այդեզրծությունը, պտղաբուծությունն այն աստիճանի յե հասցնում, վոր յերկրի խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները հնարավորություն են ստանում որըստորե վատորակ, քիչ բերք տվող պտղատու բույսերը, բանջարեղենները փոխարինելու բարձրորակ, բերքատու և կլիմայական տարբեր պայմաններին լավ հարմարված դիմացկուն տեսակներով:

Միջուրինյան կայանը վոչ միայն իր սահմաններում ունեցած յերթասարդ կադրերի աշխատանոց ե, այլ և այնտեղ ԽՍՀ Միության տարբեր աւելերից պրակտիկայի յեն գալիս բազմաթիվ ուսանողներ, բազմաթիվ եքսկուրսանոներ (տարեկան 7—8 հազար). Կայանի հետ անհատական գրադրություն ունեցողներն ուսումնասիրում են Միջուրինյան կայանի նվաճումները, մեթոդները, տեխնիկան, և այդպիսով լայն մասսայականացվում ե մի գործ, վոր որըստորե բարձրացնում և Միության սոցիալիստական պտղաբուծությունը:

Ինքը՝ Միջուրինը միշտ կապված է յեղել լայն մասսաների հետ, իր փորձառությունը նա գաղտնիք չի դարձրել այլ ամենայն պատրաստակամությամբ իր գիտցածը, իր նվաճածը բացեիբաց տրամադրել է յերկրին:

## ՄԻՉՈՒՐԻՆԻ ԿՅԱՆՔՆ ԸՆՏ ՏԱՐԻՆԵՐԻ

ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆ «Վետնիկ Ցնանի»-ի 8)

1855 թիվ. Հոկտեմբերի 27 (14). Ծնվում է գինվորական պաշտոնյա վլադիմիր Իվանովիչ Միջուրինի ընտանիքում նրա վորդին — Իվանը:

1873 թիվ. Հայրը մեռնում է, ընտանիքը քայլեալում է, չքավորության գիրկն ընկնում: Միջուրինը թողնում է ուսումը և մտնում ծառայության Կազմով կայաբանում (Մուկվա-Մյազանի յերկաթուղարիծ):

1875 թիվ. Ամսական յերեք ուուբլի վճարով կապալով վերցնում է քաղաքային դումայի մի կարգածք և սկսում է փորձնական աշխատանքները:

1888 թիվ. Կազմովից 6 կիլոմետր հեռավորության վրա կապալով վերցնում է մարզագետանային մի հողամաս: Հիմք է գրվում ուսական պտղաբուծության պատմության մեջ առաջին հիբրիդիզացիոն բաւարանի:

Առաջին անգամ հայտնվում են միջուրինյան նշանավոր փոփոխակները — խնձորի («մեկ ու կես գրանքանոց անտոնովկա») և բալենու (նշանավոր՝ «պտղաբեր Միջուրինյանը», «Հյուսիսային գեղեցկությունը» և այլն):

1902—1904 թթ. Առաջ են բերվում աշխարհիս ամենադիմացկուն փոփոխակները — կեռասի, ծիրանի, խաղողի, խոշորապառուղ մորենու, մոշի, սմարողինայի:

Միջուրինն ընտրվում է այդեզրծության ընկերության կալուգայի բաժանմունքի, Ռուսաստանի այդեզրծության և ամերիկյան «Բրիդեր» գիտական ընկերության պատվավոր անդամ:

1905 թիվ. Միջուրինի մշակած նոր մեթոդիկան և յերկրի բոլոր ծայրերից ստացված վայրի և կուլտուրական ձեռքը հնարավորություն ավին նրան անցնելու իր աշխատանքների հետագա հետապին — միջամտսակային հիբրիդիզացիոն: Միջուրինն ստանում է հիբրիդներ (խառնածիններ) ազգակցաբար իրարից հեռու բույսերից, այն և ծիրանից և սալորից, բալից և կեռասից, տանձից և ոնձենուց, ձմերուկից և սեխից և այլն:

1918 թիվ. Հունվարի 21. Կազմվել խորհրդայնացումից յերեք որ անց Միջուրինս իր ցանկությունը հայտնեց աշխատելու նոր իշխանության համար:

1919 թիվ. ՌիժֆԱՀ Հողմողկոմատն իր հովանավորության տակ և առնում Միջուրինի բուծարանը: Սովոր, «քայլայման պայմանական իրավային իշխանությունը Միջուրինի գլխական աշխատանքները լայն չափերով ապահովում ե միջոցներով, նյութերով և կաղըերով: Միջուրինը մամուլի միջոցով կոչ և անում այդեզործության բոլոր մասնագետներին — աշխատելու հաղթող պրոլետարիատի գործի համար:

1922 թիվ. Փետրվարի 18-ին Տամբովյան նահանգական գործկոմը ժողովում իր ստանում ե հեռագիր, վորով հաղորդվում ե այն մասին, վոր Վ. Ի. Լենինը շատ ե հետաքրքրվել Միջուրինի աշխատանքներով:

Նույն թվի ամառը Միջուրինին այցելում ե ԿԳԿ-ի նախագահ Մ. Ի. Կալինինը:

1923 թիվ. Մոսկվայի գյուղատնտեսական ցուցահանդեսում ցուցադրված նշանավոր եքսպոնատների համար Միջուրինն արժանանում է բարձրագույն պարզևարման:

Նույն տարվա նոյեմբերին ԽՍՀ Միության ժողովում հաստուկ վորոշումով Միջուրինի անվան բուծարանի աշխատանքները համարելով համապետական արժեք ունեցող, բաց ե թողնում անհրաժեշտ գումար ամբողջ գործի զարգացման համար:

1925 թիվ. Կազմվում հանդիսավոր կերպով տոնվում ե Միջուրինի աշխատանքների հիմնամյակը: Հոբելյարը վողջուններ և ստանում Մ. Ի. Կալինինից, Մ. Ի. Ռևլյանովյացից, Հողմողկոմատից, կուսակցական, խորհրդային և պրոֆ կազմակերպություններից, Կարմիր բանակից, ԲԺՀ-երից, ԲՈՒՀ-երից, զիտահետազոտական հիմնարկներից և յերկրի գիտնականներից: Միջուրինը պարզեվատրվում ե Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով:

1927 թիվ. Բաց ե թողնվում կինոֆիլմ «Հարավը Տամբովում», վորը նվիրված է Միջուրինի աշխատանքներին: Ֆիլմը ցուցադրվում է Խ. Մ-ում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

1929 թիվ. Մարտ ամսին Միջուրինին յերկրորդ անգամ այցելում ե ԽՍՀ ԿԳԿ-ի նախագահ Մ. Ի. Կալինինը:

1931 թիվ. Միջուրինին այցելում են ԽՍՀ Հողմողկոմատի ժողովը

Միջուրինը պարզեվատրվում ե յերկրի բարձրագույն՝ Լենինի շքանշանով:

1932 թիվ. Մայիսի 18-ին ԽՍՀՄ ԿԳԿ-ի պրեզիդիումը վորոշում է Կազմով քաղաքը վերանվանել — Միջուրինսկ:

1934 թիվ. 60 տարվա աշխատանք և 80 տարվա Միջուրինի կյանքը: Այդ հորելյանը խորհրդային այգեգործության տոնն եր: Հոբելյարը ստանում է բարձրագույն պարզեներից ամենաբարձրագույնը — ընկեր Ստալինի վողջունը:

1935 թիվ. Վորակավորման բարձրագույն հանձնաժողովը ի. Վ. Միջուրինին տալիս ե բիոլոգիայի դոկտորի կոչում:

1935 թիվ. Հունիսի 1. ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի նստաշրջանում Միջուրինն ընտրվում է Ակադեմիայի պատվավոր անդամ:

1935 թիվ. Հունիսի 7-ին ծանր հիվանդությունից հետո մեռնում է ի. Վ. Միջուրինը:

## ԼՈՒԹԵՐ ԲԵՐԲԱՆԿ

Լութեր Բերբանկը զիտական մեծ ժառանգություն եւ թողել։ Նրա բազմահարուստ և արդյունավետ աշխատանքների արդյունքները մանրամասն նկարագրված են Ամերիկայում լույս տեսած 12 հատորների մեջ, լավ, շքեղ նկարագարված գունատիպ նկարներով։


Ո՞վ եր լութեր Բերբանկը։ Նա մի սիրող գուղատնտես պաղաքույծ եր, վոր կյանքում վորձնականապես կիրառելով Դարվինի\*, Մենդելի\*\* ուսմունքների սկզբունքները՝ կարողացավ պաղաքուծության, բուսաբուծության բնագավառում նոր բուսական ձեերի, սորտերի (փոփոխակների) առաջացման գործում մեծ նվաճումների հասնել։

Բերբանկը ծնվել է Մասաչուսետ շտատի Չեստեր քաղաքում (Ամերիկա)։ Մանկության և պատանեկության որերը նա անց է կացրել իր հոր կալվածքում։ Մանկությունից նրա մեջ կար սեր գեղի բնությունը, մանավանդ բուսական աշխարհը։ Ըստանիքում նա 13-րդ զավակն եր, և բոլորի մեջ հետագայում հոչակվեց միժիայն Լութերը։ Բերբանկը հետաքրքրվում եր գործարանային մեքենաներով։ Այդ հակումն ել անպտուղ չանցավ։ Նա հնարեց շատ պարզ շոգեմեքենա, վորի միջոցով շարժվում եյին նավակները։ Իր կյանքի սկզբնական շրջանում Բերբանկը վորոշ ժամանակ գործարանային պրակտիկա յել ունեցավ։ Նա իր ձեռքի տակ ունեցած մեքենան այնպես կատարելագործեց, վոր իր աշխատանքի արդյունքը տասնապատիկ ավելացավ. զրա հետևանքով Բերբանկի աշխատավարձն ել բարձրացավ։

Բերբանկի հետախուզող միտքը կանգ չառավ մի կետում։ Շուտով նա անցավ իր սիրած ասպարեզին — բուսական աշխարհին։ Մի շարք

\* Զարլ Դարվին — անգլիացի նշանավոր բնագետ (1809 — 1882). իր «Ճեսակների ծագումը» գրքում վերջնականապես տպացուցեց որ բանիքների եվոլյուցիոն կարգացումը, բոլորովին ժխտելով արարշագործությունը։

\*\* Գրեգոր Մենդել — ավստրիացի արքա-բնագետ, առաջինը 1865 թ. հիմնավորված փաստերով խոսեց ժամանակականության մի քանի որենքների մասին։ 1900 թվականից կիտությունն ընկունեց նրա ուսմունքը ժառանգականության մասին, իր հիմնական կետերով։



ԲԵՐԲԱՆԿ

փորձերից հետո նրան հաջողվեց արագացնել յեղիպտացորենի աճումը՝ նրա աճման ժամկետը կրծատել Զքաղվելով կարտոֆիլի մշակությամբ՝ նա կարողացավ մի այնպիսի տեսակ աճեցնել, վորը սովորականից ավելի մեծ պալարներ տվեց: Այդ կարտոֆիլն այնքան արդյունավետ դուրս յեկավ, վոր սկսեցին «Բերբանկի կարտոֆիլ» ցանել: Բերբանկի գյուտից հետո կարտոֆիլի բերքը շատ բարձրացավ: 1906 թ. Բերբանկի գյուտի շնորհիվ Հյուսիսային Ամերիկայում 17 միլիոն դոլարի կարտոֆիլ ստացվեց: Իսկ ինքը Բերբանկը իր գյուտից վաստակեց միայն... 150 դոլար:

Մի փոքր զումար հավաքելով Բերբանկը վորոշում ե գնալ Կալիֆորնիա, վորի հողն ու բնությունը շատ նպաստավոր եյին իր ծրագրած ընդունակության, պաղարուծության համար: Այգեգործության, պաղարուծության համար շատ հարմար տեղ եր. մյուս կողմից՝ այդտեղ տեղափոխելով լավ եր Բերբանկի առողջության համար: Կալիֆորնիայի կլիմայական պայմանները նպաստավոր եյին նրա քայլայված առողջության վերականգնման համար:

Բայց այստեղ ել նաև մեծ զրկանքներ ապրեց: Յերկու յերեք տարի քաշ յեկավ զանազան ծառայություններ անելով, Մեկ տեղ ատաղձագործություն եր անում, մի ուրիշ տեղ ել թոշնանոցի պահակի պաշտոնական եր: Ապրում եր չարքաշ, կիսասոված կյանքով. նույնիսկ հանգստյան համար յերեքն հարմար տեղ չուներ: Պատահում եր, վոր հարմար ապաստան չունենալու պատճառով ստիպված եր լինում գիշերները քնել թոշունների հետ — հավաքներում: Ի՞տրկե այսպիսի պայմաններում շատ դժվար եր առողջ մնալ. մի անդամ այնքան լուրջ հիվանդացավ, վոր հազիվ թե առողջանար, յեթե նրան ոգնության չգար նրա պես չարքաշ, չքավոր կյանքով ապրող մի բարեսիրտ պառավ կին, վորի հոգատարության շնորհիվ Բերբանկը վրկվեց մահից:

Ատաղձագործություն անելով, Բերբանկը կարողացավ մի այնպիսի գումար հավաքել, վորով հնարավորություն ունեցավ մի փոքրիկ հողամաս գնելու Սանտա-Մոնա քաղաքի մոտ: Հովը շատ վատն եր, ճահճային: Ամենից առաջ անհամեշեցա եր լավացնել այդ հովը՝ ավելորդ, գործին խանգարող ճահճաջրերից ազատելով, և դրանից հետո հովը հարմարեցնել իր կարիքներին: Այդ հողամասում Բերբանկը կատարեց իր հետաքրքրական փորձերը՝ այստեղ նա ստացավ իր առաջին հաջող արդյունքները, վորոնք հետագայում ավելի ծավալվեցին և արդեն համաշխային համբավ ստացան: Թեև սկզբում աշխատում եր փոքր հողամասում, այնուամենային իրազորեց մի շարք հետաքրքրական փորձեր: Պորձն այնքան հաջող գնաց, վոր նա կարողացավ չորս դեռայտին հող ևս գնել Սեաստոպոլ քաղաքի մոտ, վորը հեռու չեր նրա սկզբանական հողամասից: Իր ժամանակ, առկուն աշխատանքով կութեր

Բերբանկը փոքր հողամասում կարողացավ խոշոր և արժեքավոր աշխատանք կատարել, վորի արդունքների համբավոր տարածվեց նույնիսկ Ամերիկայից դուրս: Զանազան յերկրների այգեզործներ, պաղարուցիչներ կապ եյին պահպանում Բերբանկի հետ, ստանում նրանից նոր բուսական ազնվացրած փոփոխակների (սորտերի) սերմեր, պատվատածություններ: Բերբանկը հազարից ավելի փորձեր արագ հինգ: Գեց հազար բույսերի վրա: Յերկրագնդի տարբեր վայրերից Բերբանկին իր բազմակողմանի փորձերի համար ուղարկում եյին սերմեր, պատվատածություններ, տակոիներ, պատվաստածություններ: Բերբանկի փոքր հողամասաւ վրա աճում եյին բազմաթիվ և բազմատեսակ նոր բույսեր:

Չնայած, վոր Բերբանկը չուներ մասնագիտական այդեղործական, հողագործական կրթություն, այնուամենայնիվ նրա աշխատանքները մեծ չափով զարկ տվին այգեզործության զարգացման: Բերբանկը սովորական այգեզործի նման չեր, նա չեր բավականում այն բանով, ինչ վոր պատրաստի տալիս եր նրան բնությունը: Նա աղղում եր ընական բուսական ձևերի վրա, փոխում նրանց իր ցանկացած ուղղությամբ: Կարծ ժամանակամիջոցում նա ստեղծում եր բուսական նոր ձևեաները ձևափոխում համաձայն իր ծրագրի և այնպես, վոր բարձրանաբույսի վրակը, և միաժամանակ բերքն ել զդալի չափով բազմապատկի: Բույսը նրա փորձակած ձեռքերում սովորականից ավելի մեծանում եր, յերկարում, կամ չհասած իր բնակ ոն հասակին, բարձրության ժամանակից շուտ բնական թափով պատուզների հարուստ բերք եր տալիս:

Բերբանկն այնքանչ վարժ եր իր գործում, վոր նրա համար դժվար չեր փոխել բույսի գույնը, ձեր, չափը, ծաղկների, պատուղների հոտը, համը, նույնիսկ անշուք և անհոտ ծաղիկները գեղեցիկ և անուշաբույր եր գարձնում: Բերբանկի ընդունակություններին պիտի վերազրել այն, վոր նա յերբեմ տասնյակ, հարյուր հազար բույսերի միջից կարողանում եր գտնել ջոկել իր ցանկացած հատկանիշներն ունեցող մի քանի բույսեր, և սրանք հիմք եյին ծառայում հետազայում կայուն և նոր բուսական ձևեր առաջ բերելուն: Ըստ յերեւոյթին, ինչպես յենթազրում եյին նրա այցելուները, Բերբանկի զգայարանները վերին աստիճանի նրբացած եյին: Բերբանկը հազարավոր միանման ծաղկեների մեջ կարողանում եր նկատել յուրաքանչյուր թեթև, աննշան շեղումը հիմնական, մշտական գույնից, կարողանում եր զդալ աննշան չափով փոփոխված, արտաստովոր բուրմունքը: Բազմաթիվ պտուղներ ճաշակելով՝ նա կարողանում եր համի չնչին տարբերությունն անգամ զգալ և վորոշ չափով այս բանին պիտի վերազրել Բերբանկի բուսական «Երաշագրությունները»:

Բերբանկն իր աշխատանքների ընթացքում չեր ղեկավարվում իր անհատական կարիքներով, չեր մտածում այն մասին, վոր փառաբանեն

Քրան կամ բոլորը խոսեն իր մասին: Յեվ յերբ Բերբանկից ձեռք եյին քերում նրա հազվագյուտ բույսերի սերմեր, պատվաստածյուղեր, նա պայման եր դնում, վոր ձեւք բերողն արգելը չհանդիսանա Բերբանկի քուսական ձևերի լայն տարածման: Վաստակայ գումարները Բերբանկը չեր պահում և կուտակում, այլ անմիջապես ոգուագործում եր իր տնտեսության ընդարձակման, բարելավման, նոր ծրագրած փորձերի համար: Վերջիվերջո նրա հիմնական նպատակն եր բույսերի ձեսափխման միջոցով բարձրացնել նրանց սննդական վորակը, բերքատվությունը, գիմացկունությունը, հարմարեցնել կլիմայական և հողային տարբեր պայմաններին:

## ՄԵՐԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԵՐԸ

ԴՐՎԵՆԻՉՄԻ ՆՇԱԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեե Բերբանկը բարձրագույն և առհասարակ լուրջ կրթություն չեր ստացել բայց և այնպես շնորհիվ իր ընդունակությունների, իր հետաքրքրականություն, շուտ ըմբռնող մտքի՝ կարողացավ այն աստիճանի լուսավորվել վոր հաղթահարեց դժվարությունները, և նրա համար այլիս անմատչելի չեին նույնիսկ լուրջ զբքերը: Նրա վրա մեծ տպագորություն թողեց Դարվինի ուսմունքը, վորի հիմնական սկզբունքները հիմք ծառայեցին Բերբանկի գործնական ծրագրերի իրագործման համար: Դարվինը, բայցի իր հիմնական տեսական աշխատությունը «Տեսակների ծագումը», հրատարակել եր նաև ուրիշ, ավելի պրակտիկ բնույթի մի գիրք՝ «Ընտանիցրած կենդանիների և բույսերի փոփոխությունները» վերնագրով: Ահա հենց հատկապես այս զրբի ուսումնասիրությունը խոշոր նշանակություն ունեցավ Բերբանկի աշխատանքների համար:

Իր վերը հիշած ահազին զրքում, Դարվինը խոսում է կենդանական և բուսական ձևերի փոփոխության, զարգացման մասին, ինչպես գիտական լեզվով ասում են՝ լուսաբանում և եվլուցիոն ուսմունքը: Դարվինը վերջ տվեց կրոնական առասպեկտներին շնչավոր արարածների գոյացման մասին: Կրոնը թե վայրի, թե ընտանի որգանիզմների առաջանալը վերագրում եր աստծուն, վորն իբրև թե գոյություն ունեցող բոլոր բույսերի, կենդանիների ձևերից սկզբում ստեղծել եր զույգույզ, և ստեղծման որից այդ շնչավոր արարածներն անփոփոխ ել մնացել են: ուրեմն, ըստ այդ տեսակետի, չի յեղել վոչ մի փոփոխություն, վոչ մի զարգացում, հետեւաբար վոչ կենդանիներն են իրար աղղակից և վոչ ել մարդն և կենդանիներից առաջ յեկել:

Դարվինը վերջնականապես հաստատեց հակառակը: Իր առաջին զրքում լուսաբանեց, թե ինչ պատճառների հետեւանքով են որդանիքները փոփոխվելով զարգացել մեկը մյուսից — նախ՝ պարզ ձևերը,

իսկ հետո՝ բարդ տեսակի կենդանիներ և լույսեր: Յերկրորդ զրքում նա արգել անասնաբուծության, բուսաբուծության բնագավառից վերցրած բազմաթիվ փորձերի տվյալներով պարզեց, վոր ընտանի կենդանիները, կուլտուրական բույսերը վոչ թե ստեղծվել են, այլ փոփոխվելով զարգացել, առաջացել են մարդկանց կիրառած այսպես կոչված արագածական ընտրությամբ:

Մարդը զարերի ընթացքում հենց նախապատմական ժամանակաշրջանից սկսած, զբաղվել ե կենդանիների և բույսերի բուժմաքրեհարկե, սկզբնական շրջանում վայրի գրությունից կենդանուն, բույսեն ընտելացնելու, փոփոխելու գործը մարդը կատարում եր չգիտակցված ձեռվ, անողանային յեղանակով: Դարվինն ասում ե, մարդն ընտրում եր իր մոտ յեղած ընտելացրած, քիչ լավցցրած բույսերից այնպիսի ձևեր, վորոնք այս կամ այն հատկանիշով ավելի եյին ձևուու իր տնտեսության, իր անոփշական կարիքների հոմար: Հաջորդ տարին ընտրած ձևի սերնդից ելի ընտրություն և անում, և այդպես տարեցարի կրկնվող ընտրության հետեւանքով գալիք ե մի այնպիսի ժամանակ, յերբ այս կամ այն բույսը, կենդանին արգելն բավականաչափ փոփոխվել եյին: սկզբնական ձևի հետ համեմատած: Մարդկային այդ աշխատանքը Գարվիան անվանեց անհետական ընտրություն: Հետապայում մարդը զիտակցելով, հանկանալով ընտրության նշանակությունը, արգեն այդ գործը այսում ե նախորդը մշակված պլանով: Ինարկե այս զեպքում ավելի կարճ ժամանակամիջոցում կարողանում եր նոր կենդանական և բուսական ընտանի ձևեր առաջ բերել ընտրության զորուու մարդուն ոգնում են բն թիւյան յերկու որենքները — փոփոխականուրյունը և ծառանականուրյունը: Առաջին որենքի համաձայն վորեն կենդանական, բուսական տեսակի նույն սերնդին պատկանողները յերեք միանգամայն նման չեն լինում վոչ իրենց ծնողներին և վոչ ել իրար: Որինակ՝ շան սերունդը, նրա ձագերն անպայման վորեն բանով իրարից տարբերվում են, տարբերվում են և ծնողներից: մեկն արագավաղ ե, մյուսը — սրատես, յերբորզը — աշխուժ, վերջառիս մօրթի զունավորության ուրիշ հատկանիշների նկատմամբ ել տարբերություններ են լինում: Նույնը կարելի յե ասել և բույսերի նկատմամբ: Մարդիկ ել բացառություն չեն կազմում: Նույն ընտանիքի զավակները միանգամայն իրար նման չեն լինում: առանձնահատուլ զծերով — մարմնային, հոգեկան — ելի տարբերվում են թե իրարից և թե ծնողներից: Այդ անհատական փոփոխությունները, ինչպես ասում են՝ անհատական շեղումները, առաջ պայմանական պայմանների աղղեցությամբ

Մյուս որենքը — ծառանականուրյունը — այն ե, վոր ծնողների հատկանիշներն ընդունակ են փոխանցվելու սերնդին: վորոշ հատկանիշները ժառանգարար փոխանցվում են սերնդեւ սերունդ: Բայց հայտնի

շի, վոր սերնդի մի մասը նման ե հորը, մյուսը — մարը, պատահում ե, վոր նման չե վճի հորը և վճի մորը, այլ պապին՝ մոր կամ հոր գծով։ Մրանց պարզ յերեսում ե, վոր ժառանգականություն ասած բանը քարդ յերնույթ ե։ Պատահում ե և այսպիս։ Վորեւ հատկանիշ առաջին սերնդին չի փոխանցվում, բայց յերեան ե գալիս յերկրորդ սերնդում կամ ավելի ուշ։ ուրեմն վորեւ հատկանիշ կարող ե թագնված կերպով անցնել, առաջին սերնդում չարտահայտվել, իսկ յերկրորդ սերնդում նորից յերեալ։ Հատկանիշների ժառանգական փոխանցումը պատահական ձևով չի կատարվում։ Կան վորոշ որենքներ, Յեզ արդեն ժառանգականության վերաբերյալ մի շարք որենքներ ճշտված են բազմաթիվ փաստերով։ Այդ որենքների լուսաբանման գծով առաջին հաջող փորձն արել եր սիրող — զիմնական Գրեգոր Մենդելը, վորի աշխատությունը հիմք ծառայեց ժառանգականության վերաբերյալ ուսումնական ավելի զարգացնելու։ Յեզ ժառանգականության վորոշ որենքների հայտնությունը խոշոր նշանակություն ունեցավ արհետական ընտրության գործում։ Այդպիսով մարդու ձեռքը արվեց մի այնպիսի գենք, վորի միջոցով նա մոտավորապես ճիշտ կարող եր իմանալ թե կենդանու, բոյցի վեր հատկանիշներն իսկապես ժառանգական են և փոխանցվում են սերնդից սերունդ։ Իհարկե այս հանգամանքը շատ ոգնեց բուսաբույժին, կենդանաբույժին։ Նախ քան լնտրություն անելը, մարդ աշխատում ե իմանալ — իր ցանկացած հատկանիշը ժառանգական ե, թե վոչ։

Ուրիշն, համաձայն փոփոխականության որենքի, բնությունը մարդուն ընտրելու նյութ միշտ տալիս ե։ Ըստրած արարածներին մարդն առանձնացնում ե, խաչաձեռում։ Ժառանգականության համաձայն՝ ընտրած հատկանիշն անցնում է հետագա սերնդին։ այս սերնդից մարդը նորից ընտրություն ե անում։ ընտրում ե այն ձևերը, վորոնց վրա ցանկալի հատկանիշն ավելի ուժեղ ե արտահայտված, և այդպես տարեցարի, սերնդից սերունդ ընտրելով, վերջագես հասնում է այն բանին, վոր կենդանին, բույսը զգալի չափով փոխվում են, ազնվանում, լավանում։ վորքան շատ հատկանիշներ փոխվին, այնքան ավելի փոխված կլինեն կենդանին, բույսը — իր անց սկզբնական ձևի համեմատությամբ։

Բերբանկը լայն չափերով կիրառեց այդեգործներին վաղուց հայտնի — բույսերի խաչաձեռումը և պատվաստման յեղանակը։

Կուլտուրական բույսերը փոփոխելու, ազնվացելու աշխատանքներում այցելործը կիրառում ե բույսերի խաչաձեռում յեղանակը։ այդ անում ե ծագիկների արհետական փոշուման միջոցով։ այսինքն՝ բնքը — այցելործը — մեկ ծագկից ծագկեփոշին վրձինով տեղափոխում ե մյուս ծագկի վրա, կիրառվում ե վոչ միայն միննույն տեսակի բույսի ծագիկների փոշուման, այլ և տարբեր տեսակի, յերբեմն ել հետագոր

ազգականություն ունեցող բույսերի։ այս ձևով առաջ են գալիս, ինչպես ասում են, հիբրիդներ, խառնածիներ, վորոնց վրա նոր հատկանիշներ են նկատվում — արտադրող բույսերի, ծնողների հետ համեմատած։

Ահա լութեր Բերբանկն ել հենց այդպիսի խաչաձեռմբ ստանում ե խառնածին ձևեր։ Այսպիսով յերբեմն շատ շուտ հաջողվում ե ծնողների ոգտակար, բայց տարբեր նշանակություն ունեցող հատկանիշներն իրար միացնել և ամրացնել հիբրիդի վրա, որինակ՝ ծնողներից մեկից ցրախն զիմանալու հատկանիշը (այս բույսը դիցուք բերքառատ չե) կապվում է մյուս ծնողի բերքառատության հատկանիշի հետ (այս բույսն ել ցրտերին զիմացող չեր)։ Խաչաձեռման միջոցով առաջ յեկած հիբրիդի վրա յերբեմն ամրացվում ե և ցրտագիմացկությունը, և պաղաքերությունը։ Այդ հիբրիդներից Բերբանկն ընտրում եր նոր, ցանկալի հատկություններ ունեցողներին և ժամանակի ընթացքում արգեն կայուն ձևեր առաջ բերում։ Անշուշտ այս աշխատանքում խոշոր նշանակություն ունի ժառանգական հատկանիշների հայտարերում։ վոչ ժառանգական հատկանիշն ընտրելն իմաստ չունի։ Մի խոսքով փոփոխակների, տարբեր տեսակների խաչաձեռմն այցելործին բավականաչափ նյութ ե տալիս ընտրության համար։ Յեթե առաջ յեկած փոփոխությունները ձեռնտու եյին, Բերբանկը իմաստ մում, լավ պահպանում եր բույսը, իսկ յեթե ստացված սերունդը առանձին արժեքից և հետաքրքրաւությունից զուրկ եր, այդպիսի բույսերն անխնա փոչնչացվում եյին։

Տարբեր յերկրներից ստացված բույսերն իրար հետ խաչաձեռով, կամ պատվաստման տարբեր յեղանակներ կիրառելով, Բերբանկին հաջողվեց բույսերի վրա բազմատեսակ փոփոխություններ առաջ բերել, ազնվացներ, լավացներ հին ձևերը կամ բոլորվին նոր ձևեր առաջ բերել։ փոխվում եյին ծաղիկները, փոխվում մանավանդ պատուղները։ իր փորձերն անում եր պաղատու ծաղերի, տունկերի վրա, բանջարեղենի, կերպառույսերի վրա։

Բերբանկի աշխատանքի պրոցեսը հետեւյալ կերպ եր ընթանում Ամենից առաջ սերմը ցանվում եր ջերմոցներում։ Ծլած փոքրիկ վոս-



տերից նա ընտրում եր լավ տեսակները: Բերբանկի ընդունակությունների մեջ կար մի աչքի ընկնող զիծ: այդ այն ե, վոր նա բույսի ընդհանուր տեսքից մոտավորապես կարողանում եր գուշակել նրա այս կատար մասի գալիք փոփոխությունները: որինակ՝ ցողունի, տերեի հիման վրա մոտավոր կերպով պատկերացնում եր, թե ստացվելիք պառուղինչութեան կար մի լինելու: Զերմացներից ընտրած «ազնիվ» ծիլերը տեղափոխում եր բացողյա ածուները, Յերբ ծիլերն ածում եյին մինչև մեկ փուտ, Բերբանկը յերկրորդ անգամն եր ընտրում յեղածներից ցանկալի տեսակները: Ընտրում եր վորոշ չափի ցողուններ, ուժեղ զարգացած տերեներով, խոշոր և հաստատ բողոքներով: Բողոքի տերեի, ցողունի համամատ Բերբանկը մոտավորապես ընրոշում եր ստացվելիք պտղի չափը, համը:

Փորձերի հաջող արդյունքները մտսամբ պիտի վերացրել և այն հանգամանքին, վոր Բերբանկն իր նախագծած նապատակին հասնելու համար բույսեր չեր խնայում, հազարներով, յերբեմն առանյակ հազարներով նույն տեսակի բույսեր եր ցանում, այդ մասսայական աճեցողության, շնորհիվ նա ավելի հեշտ եր հնարավորություն ունենում հազարից գոնե մեկն ընտրել իր վորոնած, ցանկալի հատկանիշով: Յերբեմն կես ժամկա մեջ նա տրագ-արագ անցնելով ածուների շարքերով՝ մի անգամից տասնյակ հազար բույս եր ստուգում և չնայած դրան, նրա խուզրկող նույն զգայարաններից չեյին խուսափում նույնիսկ չափազանց աննշան արտահայտված ցանկալի հատկանիշները, բավական ե, վոր ընտրյալը հեռավոր, թիկուղ թիթե նմանություն եր ունենում իր ծրագրած դույնին, ձեկն և վորեե այլ հատկանիշն— անմիջապես ընտրում եր:

Նա ածուներն ուսումնասիրում եր իր ոգնականների հետ. նրանց հետ սիասին արագինթաց քայլերով անցնում եր ածուներով, ապա հարել յեղած դեպքում Բերբանկի ցուցմունքով ընտրած բույսի վրա անմիջապես նշան, եր դրվում: Յեկ այդ կարճատե հետազոտության արդյունքը հաճախ լինում եր այն, վոր ընտրվում եր միայն 50, 100 սրինակ. Սակայն դրանով չեր վերջանում ընտրությունը: Բերբանկի ուշագրության չարժանացած հազարավոր բույսեր մտանվում եյին անինտ վոչնչացման— ուղղակի այրում եյին այդ բույսերը Բերբանկը փորձի համար ուղեց մտավել— արդյոք սխալ չի փորձում, վոր բույսերի չընտրված մասը վոչնչացնում ե, դրա համար այդ բույսերից մեկն աճեցրեց և ինչպես կարելի յեր սպասել, հետեանքն ամեներն չեր համապատասխանում իր ծրագրին: Ինարկե, ուրիշ սովորական այդեղործը չեր համարձակվի այդպիսի շոայլություններ, ոյութականի տեսակետից միանգամայն վաստակար, «անարդյունավետ» քայլ անել: Անպայման շահպիտական նպատակներից զրգված նա չընտրած բույսերն ել


կթողներ, վոր աճեյին, վորպեսզի այդ բույսերից ել շահվեր: — Բայց Բերբանկի փորձերում նյութական ձգտումները մեծ գեր չեյին խաղում: Նյութականը նրան հետաքրքրում եր այն չափով, ինչ չափով հնարավորություն եր ստեղծվում նոր փորձեր անելու, ավելի ու ավելի ընդարձակելու նախկին փորձերը շատ ընական ե, վոր նա ավելի նկատի յեր առնում արդյունքների հաջող լինելը, քան իր անձնական շահերը: Բերբանկը չեր մտածում փող վաստակելու մասին, բայց մինչույն ժամանակ նրա կիրառած՝ վոչ ընտրյալ ձեւերի «մասսայական վոչնչացում» ավելի մեծ արդյունքներ եր տալիս փորձի հաջողության տեսակետից, և նա կարողանում եր արագ տեմպով լավ տեսակի բույսեր ստանալ: Բերբանկը շատ ուշադիր ընտրություն եր անում: Նա ընտրածներից ել ընտրում եր այնպիսիները, վորոնք ազատ եյին վորևե հրավարականից, դեռ չեյին վարակված: Չենց դրա շնորհիվ նո կարողացավ աճեցնել առողջ բույսեր, աննպաստ պայմաններից, հիվանդություններից լավ պաշտպանված բույսերը: Ամեն տեղ արգեն հայտնի յեր, վոր Բերբանկի կալվածքից ստացած սերմերն անհամատ ավելի առողջ և ավելի գիմացկուն եյին: Այդպես եյին վկայում նրա բազմաթիվ գնորդները, վորոնք պատվերներ եյին տալիս Բերբանկին վոչ միայն Ամերիկայից, այլ և յերկրագնդի տարբեր հեռավոր յերկրներից:

Ընտրության ժամանակ վոչգոփ Բերբանկի պիս չեր կիրառում մասսայական աճեցում, բույսերի մասսայական վոչնչացում: Մենք վերն ասել ենք, վոր այգեգործը Բերբանկի չափազանց նրբացած, ծայր աստիճանի զարգացած զգայարանները պիտի ունենա, վոր կարողանա հազարավոր որինակների մեջ նկատել ցանկացած գույնը, զգալ ցանկալի հոտը: Բերբանկի աչքերը տեսնում եյին այն, ինչ վոր չեր տեսնի մի ուրիշը, նրա հոտառությունը հնարավորություն եր տալիս զգալու ամենաշնչին հոտն անգամ, — այդ ել մատչելի չեր սովորական մարդուն: Զգայարանների այդ ծայր աստիճանի նրբությունը խոշոր գեր կատարեց բույսերի բազմատեսակ փոփոխություններ, պտուղների, ծաղիկների փոփոխություններ առաջ բերելու գործում:

## Ի՞ՆՉ ԱՐԵՑ ԲԵՐԲԱՆԿԸ

Բերբանկի հմուտ ձեռքի տակ բազմատեսակ նոր փոփոխակներ ավին՝ խնձօրենին, տանձենին, դեղձը, ծիրանը, սալորը և ուրիշ պտուղները: Միմիայն սալորից և ու սալորից (Վերհօսմաթ) ստացավ մինչև 60 տարբեր տեսակներ: Նոր պտուղներ ստանալու համար նա խաչաձեռում եր ամերիկյան, յելլոպական կամ ճապոնական տեսակները: Սալորի մի այն պիսի տեսակ ստացավ, վորը սովորականից ավելի քաղցր եր և վաղաժամ ել հասունանում եր (ամառվա կեսին): Մի ուրիշ տեսակի սալոր ել աչքի յեր ընկնում եր լավ զիմացկունությամբ, այնպես վոր այս

տեսակի սալորը բոլորովին անմխաս, թարմ և ապահով կարող եր ուղարկվել Ամերիկայից Յելրոպա Փոխում եր Բերբանկը նաև սալորի սովորական համը. սալորի այնպիսի փոփոխակներ եր առաջ բերում, վորոնցից մեկն իր համով հշեցնում եր խնձորը, մյուսը նման եր տանձին: Բայց ամենահետաքրքրական փորձը, զոր նա կատարեց սալորների վրա, անկորիգ սալոր առաջ բերելն ե. այս սալորն տուանձին պինդ կորիդ չուներ, իսկ սերմն ընկած եր ուղղակի մսի մեջ, ուրեմն ապահով կերպով կարելի յեր սալորը հենց սերմով ել ուտեր



Խաչաձելով ծիրանն ու սալորը, Բերբանկը կարողացավ ստանալ մի նոր պտուղ, զորը հանդիսանում եր յերկուսի խառնուրդը. այդ պտուղն անվանեց պլումկօս (պլում — նշանակում ե սալոր, իսկ կուն ել ապրիկոս խոռքից ե, զոր նշանակում ե ծիրան): Այդ բավականին բարդ փորձը նրանից յերկար ժամանակ պահանջեց. տարիներ անցան, բայց նա իր ցանկացած պտուղն ստացավ:

Սիրիական մորենուց և սովորական մոշից (վերջինս վորոշ ընտրության յերնթարկելուց հետո) — յերկուսի խաչաձեմամբ ստացավ նոր տեսակի մի բույս, զորը ծնողներից տարբերվում եր իր ավելի մեծ տերևներով և խոշոր պտուղներով: Այդ պտուղն անվանեց «Primus» (պրիմուս — այսինքն առաջին): Պրիմուսը մի կողմից նման եր մոշին,

բայց լրիվ հասունացած ժամանակ մորու պտղին եր նման, նույնպես հեշտությամբ բաժանվում եր պտղակոթից:

Յերկար տարիների ընտրության և տարբեր տեսակների խաչաձեման միջոցով վերջիվերջո Բերբանկին հաջողվեց ստանալ անփուշ մոշի հսկայական սպիտակ հատապտուղներով:

Մորմի (Pасlēh) պտուղները սովորաբար անպետք են ուտելու համար, անդուրեկան են: Բերբանկը ծրագրեց աղնվացնել մորմն այնպես, զոր մեզ համար պիտանի պտուղ գտանա: Այդ ել կարողացավ իրագործել: Նա վերցրեց մորմաղիների յերկու տարբեր տեսակներու յերկուսի տված պտուղներն ել անհամ և ուտելու համար անպետք ելին: Այդ յերկու ձեերից նա առաջ բերեց մորմի մի նոր տեսակ, զորի պտուղները գուրս յեկան գուրեկան և համել: Բերբանկն այդ նոր տեսակի մորմն անվանեց «արևային հատապտուղ»: այդ մորմն ստանալու վրա Բերբանկը ծախսեց քսանհինդ տարի:




Բերբանկն առաջ բերեց յելակի, հաղարջենու նոր տեսակներ, գեղձի մեջ աճեցրեց նուշ, իսկ սոխի քաշը հասցրեց մինչև  $1\frac{1}{2}$  — 2 կիլոգրամի բալի պտուղը հսկայական չափի հասցրեց:

Ճատ և շատ փորձեր արեց Բերբանկը պտուղների փոփոխման ուղղությամբ. նրա առաջ բերած պտուղների փոփոխակները հայտնի եյին վոչ միայն Ամերիկայում, այլ և Ամերիկայից գուրս:

Բայց շատ հետաքրքրական են ծաղկիների փոփոխման փորձերը: Շուշանի պասկաթերթիկներն ավելացրեց յերկու անգամ. միայն այդ բույսից նա առաջ բերեց մինչև կես միլիոն տեսակներ: Վոչվոքի ուշագրությունը չեն զրավում սոխի անհոտ, անհրապույր ծաղկիները, բայց Բերբանկի ձեռքի տակ նրանք ժամանակի ընթացքում դարձան անու-

Հահոտ: Նույնն արեց և Գեղրդինի ծաղիկների հետ, սրանց ևս տվեց գուրելան հոտ: Բերբանկը մտածեց խշորացնել մի շարք բույսերի ծաղիկներ: այդ ել հաջողվեց: Արգանդախոտի ծաղկի տրամագիծը հասցրեց մինչև 20 սանտիմետրի, տերևփուկի ծաղկիկը բուռնցքի մեծության, արեվածաղկի ծաղիկը (ավելի ճիշտ ե ասել ծաղկերփունջը, վորովհետեւ նրա մի ծաղիկը փաստորեն բազմաթիվ ծաղիկներից կազմված) հասցրեց մինչև 66 սանտիմետրի, զատկածաղիկը—մինչև 16 սանտիմետրի:



Նա իր ցանկության համեմատ փոխում եր և ծաղիկների գույնը և այնպիսի գույնն եր տալիս այս կամ այն ծաղկին, վոր տվյալ բույսի համար սովորական չեր:

Յերկար փորձերից հետո նա ստացավ հսկայական խաչխաչներ, վորոնց գույնն ել փոխեց յերկնագույնի: Բայց հետաքրքրական են նրա այն ծաղիկները, վորոնք որվա մեջ փոփօխում եյին իրենց գույնը. որինակ, նրա առաջ բերած մեխակների մեջ կային այնպիսիները, վորոնք առավտար ձյունանման սպիտակ եյին, կեսորին — վարդագույն, յերեկոյան — մուգ կարմրագույն: Գեղգինի անդրուեկոն հոտը վերացնելով՝

մագնոլիայի հոտ տվեց նրան, առաջ բերեց յերկու պսակաթերթիկներից բաղկացած շուշան:

Բերբանկի փորձերը զանազան ուղղությամբ եյին կատարվում — փոփխության եյին յենթարկվում բույսի տարբեր մասերը — արմատը, ծաղկիկը, պտուղը, ցողունը, և ամինատարբեր բույսեր: Մի շարք կերպույսեր, նաև կարտոֆիլը, Բերբանկի հմուտ ձեռքի տակ այնպիսի փոփխություններ կրեցին, վոր աչքի եյին ընկնում իրենց դիմացկանու-



թյամբ թե կլիմայական պայմանների և թե հիվանդությունների նկատմամբ, այս ուղղությամբ Բերբանկը զգալի նվաճումներ ունեցավ:

Առանձին ուշադրության և արժանի Յերբանկի աշխատանքը կարտոֆիլի վրա: Նա կարողացավ կարտոֆիլի ուլայի քանակը 25%-ում բարձրացնել և զիմացկուն դարձնել հիվանդություններին: Բազմաթիվ փորձեր արեց կարտոֆիլի և պոմիդորի խաչաձևան ուղղությամբ, նրանց հիբրիդների վրա: Հետաքրքրական են մանավանդ այդ յերկու

աղջակից բույսերի պատվաստման փորձերը։ Պոմբորի ճյուղերի վրա աճեցրեց կարտոֆիլի ողային պալարներ։ Կարտոֆիլի պտուղները, վոր խակի ուտել չեր կարելի, Բերբանկի շնորհիվ դուրեկան համ ստացան, այդ համեր պատվները Բերբանկն անվանեց *romato* (պոմատո)։

## ՓՈՐՁԵՐ ԾԱՌԵՐԻ ՎՐԱ

Վոչ միայն բույսերի առանձին մասերը, այլ և բույսն ամբողջապես նույնպես յենթարկվում եր վորոշ փոփոխությունների։ Արդեն խոսեցինք, վոր գժվար աշխատանք չեր Բերբանկի համար փոխել ծառերի պտուղների վորակը, չափը, տեսքը, բարձրացնել նրանց բերքը։ Բայց Բերբանկը զբաղվեց նաև այն խնդրով, վոր ծառը շուտ հասունանա, ժամանակից շուտ բերք տա, սովորական հասակից ցածր կամ բարձր լինի, նայած նախատեսած նպատակներին։ Այդ ուղղությամբ ել նա հաջողություններ ունեցավ։

Շագանակի բարձր ծառից առաջ բերեց կարճահասակ, վաղահաս տեսակներ. այդ փոփոխությունը բացասաբար չեր ազդել պտղի վորակի և քանակի վրա — բերքը նույնքան եր, վորթան և սովորական շագանակինը։ Բերբանկի շագանակն ուղղակի թղուկ եր բնական տեսակի շագանակի համեմատությամբ։ Այդ շագանակը միջին հասակի մարդուց ցածր եր (հասնում եր մինչև նրա գոտկատեղը), տալիս եր լավորակ և խոշոր պտուղներ։ Այդ թղուկ շագանակները, շատ հարմար եյին այն տեսակետից, վոր հեշտանում եր նրանց վրայից պտուղները հավաքելը, կարիք չկար բարձրանալու ընդհակառակը, մարդ գեռ ստիպված եր քիչ կռանալ թղուկից պտուղները համար։

Շագանակի տղնացման և վաղահաս գարնելու փորձերը նա սկսեց 1884 թվականից։ Իր ձեռքի տակ ուներ ճապոնական կարճահասակ տեսակ, Հյուսիսային Ամերիկայի մի ձե խոշոր պտուղներով և յեվրոպական համեր շագանակ։ Այս փորձերում Բերբանկը կիրառեց պատվաստման յեղանակը։ Սկզբում նա կարողացավ ստանալ վաղահաս ձեեր։ Առհասարակ բույսերի վրա, մանավանդ ծառերի վրա տրած փորձերում ամենից առաջ պահանջվում եր կրծտել հասունացման ժամկետը. այս դեպքում արագանում ե աշխատանքը, ավելի քիչ տարիներ են խլում փորձերը, և ավելի շուտ կարելի յե տեսնել արդյունքները։ Մարդու կյանքն այնքան յերկարատե չե, և դանդաղ աճող, ուշ հասունացող ծառերի վրա փորձեր անելն այնքան ել ձեռնոտու չե այգեգործին։ Ամենից առաջ նա լուրջ հարց ե դնում — վորքան կարելի յե վաղահաս գարձնել այս կամ այն ծառը։ Մի շարք բույսերի նկատմամբ այդ հաջողվեց իրագործել։ Նրա վաղահաս շագանակն արգեն յերկորդ տարում պտուղ եր տալիս։ Այս վաղահաս տեսակի ճյուղը պատվաստեց չափահաս ձեի վրա։ նոր տեղում յերկրորդ տարում պատվաստած ճյուղը ծաղիկներ ե

առաջիս, ապա և պտուղներ։ Ուրիշ փորձեր անելով վերջապես նա ստանում ե վաղահաս այնպիսի ծառեր, վորոնք հենց առաջին տարում, առանց վորեւ ե պատվաստման, տալիս են խոշոր հասունացած պտուղներ։

Բերբանկի կարճահասակ տունկանման շագանակի տերեները և պտուղները ձեռվ և չափով նույնն եյին, ինչպես և սովորական շագա-



նակինը։ Բերբանկը վոչ միայն շագանակի և այլ ծառերի բերքը բարձրացնելու, պտղի վորակը լավացնելու կամ պտուղը խոշորացնելու ուղղությամբ եր աշխատում, այլ և վոչ պակաս ուշադրություն եր գարձնում այն բանի վրա, վոր ծառը դիմացկուն գարձնի հիվանդություններին. այդ ել հաջողվեց — Բերբանկի աղնվացրած ծառերն ապահովվեցին հիվանդություններից։

Բերբանկի շագանակի մի տեսակը ծլման որից նույնիսկ ութ ամիս  
անց պտուղներ եր տալիս:

Այժմ տեսնենք՝ ինչ արեց Բերբանկը ծառի հասակի նկատմամբ։ Ահա  
նրա ընկուղենին, ընդամենը տասն-երինգ տարեկան ե, բայց իր հասա-  
կով, տեսքով նման է 75—100 տարեկան ընկուղենուն։ Բերբանկի վա-  
զակաս ընկուղենին մինչև 23 մետր բարձրություն ունիր։ Այս վազակա-  
սությունն այնուամենայնիվ չազդեց ծառի վորակի վրա։ տասնհինգ  
տարեկան ընկուղենու բնափայտը չեր տարբերվում յոթանտուն հինգ  
աարեկան ընկուղենու բնափայտից և նույն չափով պիտանի ի յեր շինա-  
րարական նպատակների համար։

Ուրիշ ծառի նկատմամբ ել այդպիսի նվաճումներ ունեցավ։ Բեր-  
բանկի 15—16 տարեկան ծփին իր բարձրությամբ պակաս չեր 50 տա-  
րեկան ծփուց։ Այդ ծառի համար պատվաստաճյուղ բերել եր նա իր  
հայրենիքից՝ նոր Անգլիայից, պատվաստել եր կալիֆորնիական ծփու  
արմտին։

Իր ընկուղենին Բերբանկն ստացավ հետեւյալ յերեք տեսակներից —  
կալիֆորնիայի սև տեսակից, արևելյան-ամերիկյան և պարսկական  
ձեերից։

Յերկու սև ընկուղենու խաչաձևամբ նա ստանում ե չափազանց  
արագ աճող և շատ բարձր բերք տվող ընկուղենին։ Մկրնական ձեի  
համեմատությամբ նոր տեսակը շատ բարձր էր, մի քանի անդամ ավելի  
բերքատու և պտուղներն ել սովորականից 2—3 անդամ մեծ։ Ընկու-  
ղենու մի ուրիշ ձեւ շատ արագ աճեց և տաս տարեկան հասակում  
նման եր յերեսուն տարեկան պարսկական ընկուղենուն։

Սանտա-Ռոզայի և Սեաստոպոլի՝ Բերբանկի տնտեսությունները  
հաճախողները տեսներով աճեցրած հսկա (13—14 մետր), բայց տարի-  
քով փոքր (20 տարեկան) ընկուղենիները, սխալմամբ նրանց տարի-  
քավոր (80—90 տարեկան) ծառեր երին համարում։ Այդ ընկուղենի-  
ների աված տակտակները վորակով բարձր երին սկզբնական ձեերի  
փայտից։

Հասկանալի յե, թե վերջափ մեծ նշանակություն ունի այս նվա-  
ճուղը, մանավանդ մեր անտօնային տնտեսության զարգացման գոր-  
ծում։ Կտրած անտառի տեղ կարճ ժամանակամիջոցում արագ թափով  
նոր անտառ կարելի յե աճեցնել, և կարեք չել լինի շատ յերկար սպա-  
սելու լավորակ շինարարական փայտ ստանալու համար։

Ընկուղենու վրա Բերբանկը մի ուրիշ հետաքրքրական փորձ ել կա-  
տարեց։ Բերբանկը նկատեց, վոր պարուակական տեսակի մի ծառի ըն-  
կույզների կճեպը բավական բարակ էր։ Իր սովորական մեթոդները  
կիրառելով՝ այդ ընկուղենուց առաջ բերեց մի այնպիսի նոր տեսակ,  
վորի ընկուղի կճեպը չափազանց բարակ էր, նուրբ թաղանթի յեր


վերածված։ Մարդկանց համար շատ ձեռնտու հատկանիշ եր այդ—եներ-  
գիա չեր ծախսվի պինդ կճեպը կոտրելու վրա, բայց իրեն —բույսի հա-  
մար շատ աննպաստ փոփոխություն եր այդ, վորովհետեւ ընկույզները  
թուչունների զո՞ն դարձան։ Բարակ թաղանթ ունենալու պատճառով ըն-  
կույզները շատ հեշտությամբ կտցահարվում, վոչնչացվում եյին թուչուն-  
ների կողմից։ Այդ հանգամանքն արդեն մարդու համար ել ցանկալի բան  
չեր։ Յեկ Բերբանկն ստիպված յեղավ ինչ անել։ Նա մտածեց միջին  
ճանապարհը գտնել — մի կողմից պետք եր ընկույզները պաշտպանել  
թուչուններից, մյուս կողմից ել՝ պինդ կճեպից պատվիլ։ Սկսեց իր  
փորձերը հակառակ, հետաքարձ ուղղությամբ կատարել. իզուր չանցան  
նրա ջանքերը. իսկապես հաջողվեց այնպես փոփոխել ընկուղենին, վոր  
ընկույզի կճեպը թուչունի համար ամուր եր, անմատչելի, իսկ մարդու  
համար — այնքան բարակ (ավելի նուրբ, քան սովորական ընկուղինը),  
վոր շատ հեշտությամբ կտորվում էր։ Բացի այդ, այս նոր տեսակի  
ընկույզն ուներ և մի շարք ուրիշ առավելություններ, ինչպես, որինակ՝  
խոշոր եր, սպիտակ և շատ համեղ միջուկ ուներ, ավելի բարձր բերք եր  
տալիս։ Այդ ընկույզին «փափկակճեպ Սանտա-Ռոզա» անունն են  
տալիս։

Բերբանկի փորձն — ընկուղենուց ել վաղահաս տեսակներ առաջ բե-  
րելու, ինչպես այդ հաջողվեց շագանակի նկատմամբ, հաջող չանցավ։  
Բայց ել հաջողվեց վորոշ տեսակներից մեկ ու կես տարեկան հաստ-  
կում պտուղ ստանալ։

Պատվաստման միջոցով ստացված հետաքրքրական արդյունքներից  
մեկն ել հսկայական ծփի ստանալն եր։ Բերբանկը վերջնականապես  
իր բնակությունը հաստատել եր կալիֆորնիայում և արդեն յերկար  
տարիների ընթացքում տոկուն, մեծ աշխատանք եր ծավալել։ Մի որ  
այնուամենայնիվ նա վորոշում և այցելել իր հայրենիքը — արևելյան  
շտատները։ Իր ծննդավայրում, իրենց ընտանեկան այգում, կար հա-  
սակն առած ծփի, վորն արդյունք եր յերկու տարբեր ցեղերի խաչա-  
ձևաման։ Այդ ծառից կտրում ե մի ճյուղ և վերադարձին բերում իր հետ  
Սանտա-Ռոզա։ այսեղ իր տան մոտ աճող ծփին կտրում ե մինչև  
գետին, ապա նրա արմատներին պատվաստում հայրենիքից բերած  
ճյուղը։ Նոր տեղում պատվաստաճյուղը լավ արմատացավ, գեպի վեր  
աճեցին բունը, տերեւաշատ ճյուղերը, գեպի հողի խորքերը — արմատ-  
ները։ Տասնհինգ տարուց հետո չեր կարելի ճանաչել պատվաստած  
ճյուղը — կալիֆորնիական ծփու հիմքի վրա աճել եր մի հսկայական,  
փարթամ, խիտ ճյուղավորված և տերեւաշատ ծփի, այնպիսի բարձրու-  
թյան, վոր յերկու հարկանի տանից ել անցնում եր. և այդ տասնհինգ  
տարեկան ծփին իր տեսքով ու հասակով նման եր հիսուն տարեկան  
ծփուն։ Ուրիշի արմատների վրա, սրանց ողնությամբ հողից նյութեր

ստանալով՝ արեւելյան շտամների յեկվոր ծփին Կալիֆորնիայում անտառեւ լիորեն արագ աճեց և վաղահասակ տեսակ դարձավ:

Բերբանկի համար կարեոր խնդիր եր — բույսերի աճան թափն արագացնել: այդ ուղղությամբ նա ուշագրավ նվաճումներ ունեցավ: Հենց իր այգեզործական՝ աշխատանքների սկզբնական շրջաններում (Կալիֆորնիայում) նա արդեն վրապված էր այդ հարցի գործնական լուծմամբ: Նրա ուշագրության կենարոնն այդ ժամանակ պատղատու ծառերն ելին: Հետաքրքրական ե հետևյալ դեպքը: Բերբանկն ստանում ե մի պատվեր — ինն ամսվա ընթացքում սալորի 20.000 ստողաշ ծառ



պատրաստելու: Դժվար գործ եր այդ: Բերբանկի ընդհանուր գործն այն քան ընդարձակված չեր, վոր հեշտությամբ զլուի բերեր ձեռնտու պատշվերը: Նյութականի մեծ կարիք ուներ նա, միջոցներ եյին հարկավոր իր այգեզործությունը զարգացնելու համար. իր տնտեսության սահմանափակ պայմանագործ չերեք ուներ նա, միջոցներ եյին հարկավոր իր այգեզործությունը զարգացնելու համար. իր տնտեսության սահմանափակ պայմանագործ հարեւական սկզբաները հնարավորություն չեյին տալիս լուրջ և համարձակ ծրագրեր իրագործելու: Բայց և այնպես Բերբանկը սալորի պատշվերն ընդունեց: Ի՞նչպես սկսի — ահա այն լուրջ հարցը, վոր ծառացավ նրա առաջ. անիմաստ բան կինուեր սկսել գործը կորիզներ ցանելով, և այգալիսով ինն ամսվա մեջ նա յերեք չեր պատրաստի սալորի տնտեսությամբ պահանջված քանակը: Բայց Բերբանկն այսպես ե անում: Նա

իր փորձն սկսում ե նշենուց, սրա արագ աճող մի տեսակի 20000 սերմ ե ծլեցնում խոնավ ավազում (խոշոր հատիկավոր): Սերմերը ծածկում ե խոնավ քաթանով և սրա վրա ելի խոնավ ավազ դնում: Այս ձեռով նահարավորություն եր ստանում, առանց ծիերը մասսերու, ստուգել ծող նշենին: Փորձն սկսված եր մարտի սկիզբներին, յերկու շաբաթ անց նշենու սերմերը ծլեցին այնքան, վոր արդեն կարելի յեր տեղափոխել ածուների վրա. տեղափոխերուց հետո մի քանի ամիս ել անցնում ե, և հունիսի վերջին նշենին բավականաչափ աճել եր, այնպես վոր Բերբանկը նրանց վրա սալորի 20.000 բողբոշ կամ աչքուկ պատվաստեց: Նշենու վրա բողբոշները պատվաստվեցին հետևյալ ձեռվ: Նշենու ցողունի վրա ուսւերեն 7 տառի նման ձեզ են կտրում՝ մինչեւ յենթակեղեցին մասը ներառյալ. այս յենթակեղեցին մասը, վոր կոչվում ե կամբիում — կենդանի, գործունյա բջիջների շերտերից ե կազմված, վորոնք շատ կարեոր են և զրանց շնորհիվ են աճում բույսի ցողունի կեղևային և բնափայտի նոր շերտերը, — այլ կերպ ասած՝ կամբիումի շնորհիվ ե ցողունը լայնանում: Բացված ձեղքի մեջ մտցնում, հազնուում են պատվաստման յենթակա սալորի բողբոշը («աչքուկը»), ցողունի այդ մասն ամսուր կապում են, վոր բողբոշի մասերը լավ հպվեն նշենու ցողունին, ձեղքերը ծածկում են: Պատվաստման այս փորձերում Բերբանկն արդեն վարժված էր. նրա ընդունած պատասխանատու և համարձակ պատշվերը հաջող ե ընթանում: Պատվաստված բողբոշը նոր տեղում սերտ միանում ե և սկսում զարգանալ նշենու վրա առաջացան սալորի ճյուղեր: Հողից նշենու մեջ անցած մննդանյութերի վորոշ մասն անցնում եր ուսար ճյուղի մեջ և նրա զարգացման նպաստում: Պետք եր արագացնել, ավելի ուժեղ թափ տալ սալորի ճյուղի զարգացման: Դրա համար մննդի հոսանքը մի կերպ պիտի ուղղեր գլխավորստափես սալորի ճյուղին. ուրեմն անհրաժեշտ եր անջատել այն ճանապարհը, վորով սնունդ եր մատակարարվում նշենուն: Կարել նշենու վերեկի մասը և այլպիսով ոժանդակեցների սալորին — չեր կարելի, քանի վոր նշենին տերեւներ ուներ, իսկ տերեւների սննդագրործական աշխատանքը շատ կարեօր եր սալորի համար. նշենու տերեւներում պատրաստված որգանական նյութերն անցնում եյին և սալորի ճյուղին, ապա և պահպանում եյին նրա կյանքը, սնունդ տալիս և աճեցնում: Տերեւնակն այսպես և լուծում խնդիրը. նշենու ցողունի վրա այնպիսի կտրվածք ե անում, վոր խախտվում ե բնափայտի անոթների ճանապարհը (վերելակ ուղին), իսկ կեղեկի մասը մնում ե անջնաս, այնպես վոր պահպանվում ե տերեւների և արմատի կապը, իսկ ներքեսից բնափայտով բարձրացող նյութերի անցումը գեպի նշենին ավելի թույլ ե կատարվում, ապա ուրեմն սննդանյութերի մեծ մասն անցնում ե սալորի ճյուղին: Այս սրամիտ հնարավորությամբ Բերբանկին իսկապես հաջողվում ե ուժեղ թափով աճեցնել սալորի

Հյուղը. սալորն այնքան ե զարդանում, վոր աշնանն արդեն սալորենին կարելի յեր անջտել նշենուց, ապա ոգտագործել ինքնուրույն բուժման համար:

Եերբ անկն իր հանձն առած պատվերը՝ կատարում ե և դեկտեմբերի 1-ին հանձնում ե 19500 տնկի:




Իհարկե այսպիսի բարդ փորձերը Բերբանկից պահանջում եյին համարություն, առկունություն, իր անելիքների ճիշտ նախագծում և վստահություն իր ուժերի վրա: Վորոշ փորձեր հաջողությամբ ավարտվում եյին միայն յերկու յերեք տարիների աշխատանքներից հետո: Բերբանկը զանազան աղային լուծվածքներով ել կարողացավ ուժեղ առաջ բերել որինակ, հետաքրքրական ե նրա նշենին, վոր իրենց համար միակ սկսում է կարող լինել աշխատանքների մեջ ել վորոնում երմարդկային կարիքների համար պետքական բույսեր: Այսպիսի բույսերից եր, որինակ, կակտուր՝ անապատային, այլանդակ ձեի մի բույս: Անում ե նա միջին և կենտրոնական Ամերիկայի չոր ու տաք տափաստաններում և անապատներում: Նա լինում ե զանազան ձեի և մեծության: Նրա վրա չի կարելի տեսնել սովորական բույսին հատուկ ցողուն, տերեներ: Ամբողջ բույսը ներկայացնում ե մի ձեւափոխված հաստ, լայն, մսալի ցողուն — տարեկ և այլանդակ ձեւերի, Կանաչ տերեների փոխարեն փշեր ունի: Տերեները չոր անապատային, վայրերում նպաստավոր չեն բույսի համար, — առանց այն ել հողից ջուր քիչ և ստանում, իսկ լայն տերեներ ունենալու դեպքում ջուրն ավելի ուժեղ կողորշիացվեր, ուրեմն և բույսը կչորանար: Բայց բույսի տերեները սնունդ պատրաստելու հիմնական տեղն են, առհասարակ բույսի կանաչ մասերը, չնորհիվ նրանց մեջ յեղած՝ կանաչ քլորֆիլ նյութի, խոշոր գեր են կատարում բույսի համար անհրաժեշտ որգանական սնունդ պատրաստելու գործում: Կակտուսի տերեները փշերի յեն փոխված, ուրեմն վերանում ե տերեկի սնունդ պատրաստելու աշխատանքը, սակայն այդ գործը կատարում ե կակտուսի ձեւափոխված կանաչ մսալի ցողունը, վորը բույսի համար միաժամանակ մի տեսակ ջրամբար ե:

Կակտուսը լինելով մսալի և հյութալի — լավ կեր կարող ե լինել անասունների համար, մանավանդ չորային շրջաններում: Բայց այս բանին խանգարում են կակտուսի փշերը: Բերբանկը հատկապես ուշադրություն դարձրեց ոպունցիա տեսակի վրա: Սրա ցողունը լայն եր, հաստ, մսալի, և առանձին-առանձին տափակ ձվաձև բաժիններից — ուրեմն կարելի յեր զործածել վորպես կեր. միաժամանակ բավական համեղ եյին նրա պտուղները: Բերբանկը վորոշեց ստանալ բոլորպին անփուշ կակտուս և պտուղներն ել այնքան լավացնել, վոր ավելի դուրեկան ու զործական լինեն: Նա գոյություն ունեցող ձեւերից նախ ընտրեց ամենից քիչ փշեր ունեցողները. ընտրության մեջողը կիրառելով վերջիկերջո կարողացավ ստանալ անփուշ տեսակ. ապա վերջինս խաչաձեւով հաստ, մսալի կակտուսների հետ — առաջ բերեց անփուշ և միաժամանակ մսալի, հյութալի կակտուս — այն, ինչ վոր ծրագրել եր: Մի բան ել մնաց, պետք եր պտուղներն ել աղնվացնել, լավացնել, — այդ ել հաջողվեց: Կակտուսի վրա առաջ բերեց հյութալի, համեղ պտուղներ, սպիտակ գույնով, վորմանց մոտ՝ դեղին, ապա և վառ կարմրագույն: Այդ պտուղներն այնքան լավորակ եյին, վոր իրենց համով կարող եյին մրցել նաբնջի հետ: Ճիշտ ե, ոկղընական շրջանում պտուղ-

Ները մի թերություն ունեյին — նրանց վրա փշիկներ կային, բայց վերջիններս հեշտ եյին մաքրվում: Բերբանկը դժուն մնաց փշիկներից, չնանգտացավ, մինչև վոր բավական ժամանակ ծախսելուց հետո (կակտուսը պտուղ ե տալիս չորրորդ տարում) կարողացավ բոլորովին կոկ պտուղներ ստանալ:

Անփուշ կակտուս ստանալը, նրա պտուղներն ազնվացնելը մեծ նշանակություն ունեցավ մարդկային տնտեսության համար, մանավանդ չորային տափաստանային շրջանների համար, վորտեղ հիշյալ կակտուսն անփոխարինելի կուլտուրական բույս եր հանդիսանում:



Այդ անփուշ կակտուսը չափաղանց պտղաբեր բույս դուրս յեկավ, վոր կարելի յե աճեցնել առանց սերմերի: Անջուր շրջաններում կակտուսը մի կողմից մատչելի լավ կեր եր անասունների համար, մյուս կողմից ել՝ նրա հյութալի պտուղները, նարնջից վոչ պակաս համել, բավարարում եյին մարդկանց կարիքները: Մի կակտուսի պտուղների բերքը կարող ե բավարարել 5—6 հոգուց բաղկացած մի ընտանիքի կարիքները: Կակտուսի ամենալավ փոփոխակները, յեթե հողն ել լավ լինի, տալիս են մաս 4200 կգ պտուղների բերք մեկ գեսատին տարածու-

թյունից: Վորպես անասունների կեր կակտուսը շատ նպաստավոր է, քանի վոր բերքառատ բույս ե:

Բերբանկի նվաճումները բուսաբուծության, հատկապես այգեգործության բնագավառում, շատ մեծ եյին. մենք նկարագրեցինք նրա փորձերի ամենահետաքրքիլ որինակները: Այն ամենը, ինչ վոր նկարագրեցինք, Բերբանկը կարող եր իրագործել շնորհիվ այն բանի, վոր նա, թեև հատուկ կրթություն չուներ, բայց գիտեր բարձր գնահատել գիտության նվաճումները: Մի կողմից հոչակավոր բնագետ Զարլի Դարվինի ուսմունքի լուրջ ուսումնասիրությանը, մյուս կողմից՝ իր համառ, մի քանի տասնյակ տարիների ժրաշան ախտանքին պիտի վերագրենք Բերբանկի այդ հաջողությունները: Բերբանկի մեթոդները, նրա բոլոր նվաճումները պիտի նկատի առնեն բուսաբուծները, այգեգործները. նրա աշխատանքի դրական կողմերը պիտի ոգտագործվեն. իսկ այն, վոր բացասական արդյունքի եր տվել պիտի ստուգվի, փոխարինվի ավելի լավ կատարված փորձերի արդյունքներով:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նովաբան . . . . .	3
Իվան Միջուրին . . . . .	4
Ինչ արեց Միջուրինը . . . . .	11
Միջուրինի նվաճումները . . . . .	20
Միջուրինի կյանքն ըստ տարիների . . . . .	29
Լուրեր Բերբանկ . . . . .	32
Բերբանկի աշխատանքի ձևերը . . . . .	36
Ինչ արեց Բերբանկը . . . . .	41
Փորձեր ծառերի վրա . . . . .	46

ՀՀ Ազգային գրադարան



NL0266539

ԳԻՒՐ 50 ԿԲՊ.

12647/2

Р. ГАБРИЕЛЯН

ИВАН МИЧУРИН И ЛУТЕР БЕРБАНК



ԱՐՄԵՆԳԻՑ—ԷՐԻՎԱՆԻ